

Լ. Գ. Վինպսկան



ՐԱՆԱՀԱՅ ՓԱՐԻԵՐԱԿԱՆ

ՄԱՄՈՒԼԸ

1894 _ 1994

ԾԺԾՀԻՆ
ՏՀԲԻ

ՇԱԽԻՂ

ԸԺԾՀԻՆ
ՏՀԲԻ

ՃԱԳԵՐԻՆ, ԳՐԱԳԵՆԱԳԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԳԵՆ ԲԱՐՈՅԻՆԵՐԻՐԻ

«ՇԱԽԻՂ» ԼՈՍՏ Ի ՏԵՂՈՒՄ ՏՈՐԵՍԻՆ ԵՐ ՀԱՄԱ՝ ՀԱՊԱԹ ՕՐԻՈՂ

Նոր Զուղա

1994

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԻՐԱՆԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՄԱՄՈՒԼԻ «ԱԶԳԱՐԱՐ» - Ի 200
(1794 - 1994)

ԵՒ

ԻՐԱՆԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՄԱՄՈՒԼԻ «ՇԱԽԻՂ» - Ի 100 ԱՄԵԱԿԻ
(1894 - 1994)
ԱՌԹԻԻ

Նոր Զուղա :

Տպարան ՍԲ՝ ԱՄԵՆԱՓՐԿԻԶ Վանքի

1 9 9 4



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԷՆՅ. ՇՄԱՒՈՆԵԱՆ
(1750 - 1824)

— 20 —

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՍ ՁՕՆՈՒՄ ԵՄ
ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՀԻՄՆԱԴԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԷՆՅ. ՇՄԱՒՈՆԵԱՆԻ
ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԲՈՂՈՐ ՆԻՐԵՍԱՆԵՐԻ
ՊԱՅԾԱՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՈՐՈՆՔ ԻՐԵՆՅ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՃԻԳԵՐԸ
ՆԻՐԵՅԻՆ ԴՐԱ ՍԱՏԱՐՄԱՆ ՃԱՄԲԻՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայերն Իրանում հիմնադրապէս հաստատուել են 17-րդ դարի սկիզբներում, այսինքն սրանից շուրջ չորս դար առաջ, երբ Շահ Աբբասը պատերազմի մէջ էր մտել Օսմանցիների հետ:

Հայերն Իրանում, սկսեալ հէնց նոյն դարի երկրորդ քառորդից, ծաւալել են մշակութային աշխատանքներ, որոնցից անհրաժեշտ է յիշել առաջին տպարանի հիմնումը Նոր Զուղայում և առաջին պրէի՝ « Սաղմոս » - ի տպագրութիւնը 1638 թւին:

Տպագրական այդ ճիւղերից է նաև իրանահայ առաջին պարբերականը « ՇԱԽԻՂ » անուանով, որը տպագրւել է 1894 թւին, Թեհրանում, նախաձեռնութեամբ ու հրատարակութեամբ Անդրէաս Քէզնազարեանի, որի տպագրութեան թւականից անցնում է ճիշտ մէկ դար, բայց այդուհանդերձ մինչ այսօր իրանահայ պարբերական մամուլի մատենագիտական մի լրիւ ցանկ չունենք:

Թէև մամուլի էջերում մի քանի անգամ տպագրւել են վերանց ցանկը, անգամ նաև զրքերի մէջ, բայց դրանք շատ հեռու են լրիւ ու ամբողջական լինելուց, այն ինչ որ կարևոր է իրանահայ մի հին հայկական պաղովթի մամուլի համար:

Ներկայի մատենագիտական ցանկը, որի աշխատանքները սկսւել են սրանից շուրջ չորս տասնամեակ առաջ, ծրագրւած էր այն կարողանալ տպագրութեան յանձնել իրանահայ անվրսնիկ մամուլի « ՇԱԽԻՂ » - ի 100-ամեակին և հայ առաջին պարբերական մամուլի՝ « ԱԶԴԱՐԱՐ » - ի 200-ամեակին: Ուրախ ենք, որ այսօր իրականանում է մեր տարիների սրտի բաղձանքը և այսօր մենք կարողանում ենք հայ ընթերցողներին ներկայացնել իրանահայ պարբերական մամուլի մատենագիտական ցանկը, ըստ մեր ունեցած հրատարակութեան և ուժերի ներածին:

Եթէ ուզենանք անդամ լըիւ պատմականը տալ միայն մէկ մամուլի, իր տպագրութեան ժամանակի, կրած ծաւալի փոփոխութեան, դրանց չափերի, մխբադիրների, տպարանների և այլնի մասին, մեզ շատ հեռունները կտանի, ուստի պէտք է բաւականանանք նշելով միայն հիմնման և վաւարման (եթէ վաւարել է), իսկ եթէ շարունակոււմ է մինչև ներկայ թւականը, իր ծաւալի, էջի, վայրի, արտօնատիրոջ և այլ մանրամասնութիւն, եթէ անհրաժեշտ նկատւի:

Տպագրւած մամուլի մեծ մասը ունեցել ենք ձեռքի տակ, եթէ ոչ բոլորն էլ ամբողջական, դէթ մէկ երկու օրինակներով, որոնք կան Վանքում և մեր ձեռքի տակ, Մեր գլխաւոր աղբիւրն եղել է ՍԲ. Ամենափրկիչ Վանքի ՍԲ. Ներսէս Շնորհալի գրաւարանի մամուլի հաւաքածոն, մեր անձնական գրաւարանում եղած մամուլի որոշ նմոյշներ և Թաւրիզից, Թեհրանից և այլ անհատներից ձեռք բերած օրինակներ:

Յովհաննէս Պետրոսեանը իր կազմած « Լայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա » ստեղծած աւելի աշխատութիւնում, տւել է նաև մամուլի, յատկապէս ամսագրերի բովանդակութիւնը, մի շատ ծաւալուն և միաժամանակ օգտակար ու վնասատելի աշխատանք, որ պէտքատաքար դուրս է մեր ներկայ հնարաւորութեան սահմաններից, որը երկար ժամանակի է կարօտում:

Ամալիա Կիրակոսեանն ևս իր « Լայ պարբերական մամուլի մասնագիտութիւն » մեծ աշխատութեան մէջ, տւել է տւեալ մամուլի ուր գտնելու և այնտեղ եղած օրինակների ցանկը, որն ևս շատ օգտակար է բանասէրների և ուսումնասիրութիւն կատարողների համար, որը նոյնպէս դուրս է մեր ծրագրից:

Մամուլի որոշ մատենագիտական ցուցակներում, մամուլի կողմից հրատարակւած բացառիկ համարներն ու ժողովածուները, նկատի են առնւել որպէս առանձին մամուլ և համարակալւել միւսների շարքին, մինչ մենք դրանց առանձին մամուլ չենք համարել այլ մի մասնիկը գլխաւորի, հետեւաբար դրանք համարակալւել ենք

երկրորդական թւերով և այբբենական կարգով:

Մամուլի մինչև այժմ տպագրւած մատենագիտական ցանկերում, ընդհանրապէս, բերւել է միայն տպագիր մամուլը, իսկ եթէ ոմանց մէջ նաև խմորատիպ կամ մեքենայիւր ու ձեռագիրները, ապա բոլորը միատեղ և խառն ի խուռն ձևով: Մենք աշխատել ենք տպագիրները և խմորատիպ, մեքենայիւր ու ձեռագիրները առանձնացնել, որպէսզի աւելի պարզ ու անջատւած լինեն:

Ցանկերը կազմւել են այբբենական կարգով, որի համառօտը, ինչպէս և ժամանակագրական ցանկը, տրւելու է վերջում, անհրաժեշտ նկատւած այլ ցանկերի հետ միասին:

Անհրաժեշտ է յիշել նաև, որ ջուղայեցիների կողմից մամուլ է հրատարակւել նաև Ջուղայից դուրս, յատկապէս Հնդկաստանում, որոնց մասին յիշուել են մամուլի մատենագիտական ցանկերում:

Մեր կազմելիք մամուլի մատենագիտական ցանկը, աւելի ամբողջական դարձնելու միտումով, սրանից շուրջ տաս տարի առաջ՝ 1985 թւին, «Ալիք» Օրաթերթում (29 և 31 Յուլիս) մի յօււած լոյս ընծայեցինք «Պատասխանք Իրանահայ մամուլի 100-ամեակին» խորագրով՝ նկատի ունենալով «ՇԱԽԻՂ» - ը որպէս առաջին մամուլ, կոչ անելով միահամուռ ջանքերով աշխատանք տանել աւելի ամբողջացնելու իրանահայ մամուլի մատենագիտական ցանկը, որ դժբախտաբար մամուլում ոչ մի արձագանք չգտաւ, այլ միայն բանասէր Արսէն Մամեանը, մի դրութեամբ Թաւրիզի ձեռագիր ու մեքենայիւր մի քանի անուններ ուղարկեց, նոյնպէս զննապետ էմիլ Յակոբեանը, մի ցանկով և մի քանի լուսապատճէններով Թաւրիզից մեզ ուղարկեց, որոշ անուններ, որոնց հրապարակաւ այսու յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնները:

Ձերմ շնորհակալութիւններ նաև Վիեննայի Միլիթարեաններին և բոլոր այն անհատներին, որոնք որևէ ձևով օգտակար եղան մեզ մեր պրպտումների և ուսումնասիրութեան ընթացքին:

Վստահաբար այս ցանկն ևս լրիւ ու ամբողջական չի կարող լինել, ուստի անչափ ուրախ պէտք է լինենք, եթէ որեւէ մէկը կարողանայ մի նոր անուն աւելացնել եղածի վրայ:

Նոր Զուղա

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

15 Յուլիս 1993 թ.



ՆԵՐՁՄԱԿԱՆ

Իւրաքանչիւր ազգի մշակութային վերելքը, հանդիսանում է նաև այդ ազգի գոյատևման ու զարգացման գլխաւոր ազդակներէց մէկը:

Իրանահայը շուրջ չորս հարիւր տարւայ իր անցեալով, միշտ էլ իր բոլորանէն ուժերով աշխատել է պահպանել իր մշակոյթը և առաւել քան այդ, աշխատել է նոր ձգտումներով միշտ վերելք արձանագրել և յառաջագիւժութիւն ձեռք բերել:

Մշակոյթի պահպանման և զարգացման հետ, շատ մօտ աղերս ունի նաև մամուլը, որով կարելի է որոշել տւեալ ազգի յառաջագիւժութեան աստիճանն ու չափը, աշխարհի միւս ազգերի ընտանիքի մէջ:

Այդ ճիգերին որպէս մի փաստ, այստեղ արձանագրենք որ Իրանում առաջին անգամ հայերն էին, որ Նոր Զուգայում առաջնորդ խաչատուր Կեսաւրացու ջանքերով, հիմնեցին տպարան և 1638 թին, տպագրեցին առաջին գիրքը « Սաղմոս ի Դաւիթ » խորագրով:

Հայ պարբերական մամուլը, իր սկիզբն առել է 18-րդ դարի վերջերին, դա ևս շնորհիւ մի այլ իրանհայ հոգեւորականի՝ Յարութիւն քհնյ. Շմաւոնեան Շիրադեցու, որ իր անհատական ճիգերով, 1794 թին, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, տպագրութեան յանձնեց « Ազդարար » ամսագիրը: *)

Հայ պարբերական մամուլի մասին մինչև այժմ լոյս են տեսել մի քանի առանձին աշխատութիւններ և մատենագիտական ցուցակներ, որոնցից յիշենք Գրիգորիս վրդ. Գալէմքեարեանի « Պատ-

*) « Ազդարար » - ի հաւաքածոն, ներու հատուկ, տպագրել է Փարիզում 1970 թին, Գալուս Գիւլպէնկեան հիմնադրութեան հայկական մասնաւարտով, ովսէթ նշանակով և Մարգարիտ Մխիթարեանի հայաբանով:

մութիւն հայ լրագրութեան» (Վիեննա, հատ. Ա. 1893 թ.), Գա-
րեգին Լեոնեանի «Հայ պարբերական մամուլը» (Ալեքսանդրա-
պոլ 1884 թ. և Երևան 1934 թ.), Յովհաննէս Պետրոսեանի «Հայ
պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» երեք հատորով (Ա. հատ.
1956 թ. Բ. հատ. 1957 թ. Գ. հատ. 1954 թ. Երևան), Ամալիա
Կիրակոսեանի «Հայ պարբերական մամուլի մասնագիտութիւն»
(Երևան, 1970 թ.) և Սանուէլ Բաբլոյեանի «Հայ պարբերական
մամուլը - մասնագիտական համահաւաք ցուցակ 1794 - 1980 թ.
թ.», Երևան, 1986 թ.: Սրա մէջ աւելի ամբողջական ձևով է ներ-
կայացւած հայ մամուլը, որոնց թւում նաև իրանահայ մամուլը*),
որոնցում խօսւել է հայ պարբերական մամուլի սկզբնաւորութեան
մասին և տրւել մատենագիտական ցանկեր:

Այս գրքերի մէջ (բացառութեամբ առաջինի) խօսւել է նաև
իրանահայ պարբերականների մասին և ըստ հնարաւորին, աշխա-
տանք է տարւել ներկայացնելու ամբողջական ցանկը, բայց այդու-
հանգեւորդ կան որոշ բացեր ու թերիւններ, որոնք պէտք է աշխատենք
լրացնել և ուղղել, դարձնելով աւելի ճիշտ ու ամբողջական, ինչքան
որ մեզ հնարաւոր լինի, ըստ մեր ձեռք բերած տեղեկութիւնների:

Իրանահայ պարբերական մամուլի ամբողջական մի ցանկ տա-
լու առաջին փորձը, կատարւել է 1936 թւին, երբ «Ալիֆ» - ի
հնդամեակի առթիւ, նոյն թերթի Մարտ 22 - ի համարում, տպագրու-
ւել է Յովակ Ստեփանեանի կազմած ցանկը «Իրանահայ պարբե-
րական մամուլը» խորագրով: Այդ ցանկը իր մէջ ընդգրկում է 37
մամուլի անուն, **) որն առնւել է Գարեգին Լեոնեանի «Հայ պար-
բերական մամուլը» աշխատութիւնից: Այս առթիւ յօդածադիրը
գրում է.

*) Այդ առթիւ մեր գրախօսականը տեսնել 1991 թիւ «Բազմավեպ» - ի
մէջ, թիւ, 3 - 4 էջ՝ 425 - 428:

**) Բերւած 37 մամուլից 20 - ր տպագրւել է Թեհրանում, 15 - ր Թաւ-
րիզում, 1 - ր Նոր Զուլայում եւ 1 - ր Ռաւսում:

« Սոյն յօդւածը գրելիս, իմ միակ աղբիւրն է եղել « Հայ պարբերական մամուլը » Գարեգին Լեւոնեանի, լոյս տեսած Երեսնում, 1934 թին »:

Երկրորդ մի ցանկ տպագրւել է զարձեալ « Ալիք » - ում (20 Հոկտ. 1944 թ.) հայ մշակոյթի տօնի առիթով, ուր բերւել է մամուլի 43 անուն, ժամանակագրական կարգով, Յօդածի հեղինակի անունը յիշատակւած չէ:

Դրանց յաջորդող աւելի ամբողջական մի ցանկ, միւսներին թերիները լրացրած և « Իրանահայ մամուլը (սկզբից մինչեւ մեր օրեր) », խորագրով, յոյս է տեսել Շաւառպի (Պետրոսեանի) կողմից « Ալիք » օրաթերթի 1976 թւի 4 - 16 Սեպտեմբերի համարներում, Այս ցանկին որպէս լրացում և ուղղում, նոյն օրաթերթի 21 Հոկտեմբերից մինչև 6 Նոյեմբերի՝ 1976 թ. համարներում, տպագրւել է վաստակաւոր մտաւորական Տաճատ Պօղոսեանի « Կարենոր նշումներ եւ յաւելումներ « Ալիք » - ի մէջ տպագրւած « Իրանահայ մամուլը, ցուցակի առթիւ » յօդւածը, որտեղ մի ընդարձակ նախաբանից յետոյ, տրւել է իրանահայ մամուլի մատենագիտական ցանկը, ըստ հնարաւորին ամբողջական իսկ մասամբ էլ ոչ վաւերական, քանի որ դրանց մէջ կան այնպիսի անուններ, որոնց մասին յօդւածագիրն անդամ վստահ չէ դրանց վաւերականութեան վրայ և թողնում է ստուգելու ապագայում այլ բանասէրների կողմից:

Այս յօդւածների կապակցութեամբ, մի կարճ յօդւածով անդրադարձել է նաև տողերիս զրոյր, վենետիկում հրատարակող « Հայ րնսանիք » - ի մէջ (Մարտ - Ապրիլ 1978 թ. էջ՝ 29 - 30), որից բացի « Իրանահայ պարբերական մամուլը » խորագրով մի ցանկ ևս տրւել է « Մովսէս Տպարանը եւ իր տպագրած գրքերը » աշխատութեան մէջ (Նոր Զուգա, Լ. Գ. Մինասեան, 1984 թ. էջ 95 - 106), որտեղ բերւել է նաև խմորատիպ, մեքենագիր - բազմացած և ձեռագիր մամուլի համառօտ ցանկը: Այլ ցանկերում բերւել են շուրջ

70 անուն տպագիր և 50 անուն ոչ տպագիր մամուլից*)

Բանասէր Ժիրայր Պանիէլեանն ևս « Հայկազնիան հայագիտական հանդես - ի Ը. և Թ. հատորներում (Բէյրութ 1980 և 1981 թ.) մի յօդած ունի « Սփիւռքահայ նոր պարբերական մամուլը 1967-1980 րւերուն » խորագրով (էջ 301 ~ 324 և 253 ~ 304), որտեղ բերւել են նաև, այդ թւերին Իրանում լոյս տեսած մամուլի ցանկը:

Վերոյիշեալ երկու հատորներում տեղ գտած յօդածը, աւելի ամբողջացած ձևով, 1984 թւին, տպագրւել է առանձին հատորով և « Հայ նոր պարբերական մամուլը » խորագրով, ուր գրանցւել են Իրանում լոյս տեսած մամուլի 15 անուն:

Իրանահայ պարբերական մամուլի մասին յիշած է նաև « Հայ ժողովրդի պատմութիւն » աշխատութեան Զ. հատորի մէջ (էջ 411-720 Երևան 1981 թ.) և այլ գրքերում, որոնց ցանկը տրւել է վերջում:

Յիշենք նաև, որ իրանահայ մամուլի մասին ուսումնասիրութիւն ունեն Միրզա Մահամադ Ալիխան Թարբիաթին, Հ. Լ. Ռաբի-նօն և Բրաունը, նոյնպէս Ազիզ Դովլաթաբադին « Հուր » ամսագրում (1971 թ. Սեպտ - Հոկտ - թիւ 3 ~ 4, էջ 73 - 88) ուր տրւել է Իրանում հրատարակւած հայերէն մամուլի ցանկը, որտեղ յիշւել են նաև « Նիկողայոս » և « Մ'իութիւն » թերթերի անունները, առաջինը լամբագրութեամբ Մարտիրոսեանի, ուր արտօնութիւնը ստացւել է 1306 (1927) թւին, Այս երկուսի մասին յիշած չեն, մինչ այժմ մեր ձեռքի տակ եղած մամուլի մատենագիտական ցանկերում:

Սրանցից բացի, 1967 թւին, Էդւարդ Գիւլպէնկեանը Լոնդոնում հրատարակել է « Հայերէն մամուլը Իրանում և աշխարհում » անգլերէն լեզուով մի ուսումնասիրութիւն, որը հայերէնի և պարսկերէնի

*) Այս ցանկերը մի նախաբանով ևս « Պատրաստենք իրանահայ մամուլի 100 - ամեակին » խորագրով, տպագրւել է « Ալիք » - ի մէջ (1985 թ. Յուլիս 29 եւ 31),

է թարգմանել Մարի Ուխտանէսը, օժանդակութեամբ Սեզա Թամ-
րազեանի և Վահէ Աւագեանի, խմբագրութեամբ Հրայր Խալաթեա-
նի, որը առանձին գրքոյկով տպագրւել է Թեհրանում < Ալիք > - ի
կողմից 1968 (1347) թւին:



ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ՝

« ԱԶԳԱՐԱՐ »

1794 - 1796

Ինչպէսոր « Երկու խօսք » - ի և « Ներածական » - ի մէջ ականարի էր արւել, հայ առաջին պարբերական մամուլը՝ « Ազդարար » - ը, սկսել է լոյս տեսնել 1794 թվից, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, Յարութիւն քհնյ. Շմաւոնեան Շիրազեցու ջանքերով, որի 200-ամեակը լրանում է այս տարի:

« Ազդարար » - ի և նրա հրատարակչի՝ Շմաւոնեանի մասին շատ է գրւել, թէ մամուլում, թէ պարբերականների առթիւ հրատարակած աշխատութիւններում և թէ գանազան գրքերի և մենագրութիւնների մէջ, քայց այդուհանդերձ, նկատի ունենալով, որ մենք խօսում ենք իրանահայ մամուլի մասին, իսկ Յարութիւն քհնյ. Շմաւոնեանը եղել է իրանահայ և հիմադիրը հայ պարբերական մամուլի, որի 200-ամեակը լրանում է այս տարի, հետեւեալ տեղին ենք գտնում համառօտ ձևով անդրադառնալու նաև « Ազդարար » - ի տպագրութեան հանդամանքներին:

Յարութիւն քհնյ. Շմաւոնեանը, ծնւել է Շիրազում 1750 թվին, նախ սովորել է ծննդավայրում, ապա Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ Վանքում, ուր և երիտասարդ հասակում ձեռնադրւել է քահանայ և վերադարձել Շիրազ, հովելու իր հօտը:

Հագիւ կենք մտած և հոգևոր աշխատանքի լծած, ղմբախտութիւնն է ունենում մէկ շաբաթւայ ընթացքում, կորցնելու իր երկու փոքր տղաներին, որոնց վիշտը շատ խորն է ազդում նրա վրայ և թողած տուն ու տեղ, քաշւում է Շիրազին մօտիկ « Բաբախու » լեռը, պարսիկ սուֆի գերւիշների մօտ, ուր սովորում է պարսկերէն լեզուն

ու գրականութիւնը և հմտանում աստուածաբանութեան մէջ:

Շիրազի հայերը ամէն ջանք թափում են, նրան կրկին իր ընտանիքի գիրկը վերադարձնելու, բայց երբ տեսնում են անհնար է, ուր մնացել էր արդէն եօթը տարի, զիմում են Սբ. Ամենափրկիչ Վանքի առաջնորդին և 1784 թւի մի կոնդակով, նրան ռզարկում են Մալբաս, որպէս ծխատէր քահանայ:

Մալբասի ժողովուրդը տեսնելով նրա մեղմ ու քաղցրաբարոյ բնավորութիւնը, որոշում է ընդմիջտ պահել իրենց մօտ, ուստի Առաջնորդի թոյլտուութեամբ մօրը, կնոջը և աղջկան, Շիրազից Մալբաս են տանում, վերականգնելով յուսալքած քահանայի լքած օջախը:

Յարութիւն քահանան կարճ ժամանակից յետոյ, լծում է մըշակութային եռանդուն աշխատանքի, 1789 թւին հիմնում է իր սեփական տպարանը և սկսում է գրքեր տպագրել, իսկ 1794 թւի Հոկտեմբերից մինչև 1796 թիւը, հրատարակում է «Ազդարար» ամսագիրը, որից տպագրւում է 18 համար միայն:

«Ազդարար» - ը, իր հրատարակման 175 - ամեակի առթիւ, ինչպէս յիշեց, տպագրւեց 1970 թւին Գալուստ Կիւլպէնկեան հիմնարութեան հայկական մատենաշարով, երկու հատորով, նմանահանութեամբ և ովսէթ եղանակով, Փարիզում:

Յարութիւն քհնյ. Շմաւոնեանը վախճանել է 1824 թւին, Մալբասում և թաղւել Սբ. Աստուածածին եկեղեցու բակում, տապանաքարն ունի հետեւեալ արձանագրութիւնը.

« Որ ի սուրբ կրօնի լեալ արթուն վարուի.

Ուշիմ եւ զգօն, յամենուս յարգեալ,

Չարար, իոհամիս եւ նուրբ հանճարիւ,

Հանգեալ զծէր կեանս, կալ աստ հողացեալ,

Աս հանգչի Տէր Յարութիւն Շմաւոնեան բարեկրօն, աւագեռց Մալբասիս հայոց, ծնեալ ի Շի-

րագ, վախճաննցաւ յամի տնաոն 1824 Յեվրէր 9,
ի հասակի 74 ամաց, Քահանագործնալ աստ արթ-
նութեամբ գամս Բառասուն »,*)

Յարութիւն քհնյ. Շմաւոնեանի յիշատակը միշտ վառ է մնա-
լու հայ ժողովրդի և յատկապէս իւրաքանչիւր հայ մտաւորականի
հոգու ու սրտի մէջ:

« ՀԱՄԱՅՆՔ » ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Իրանահայ առաջին պարբերական մամուլը ըստ ոմանց, հա-
մարւել է « Համայնք » անունով մի լրագիր, որը իբր լոյս է տե-
սել 1880 թին, Ռաշտ քաղաքում, խմբագրութեամբ բժիշկ Ալէք-
սանդր Աթաբէկեանի:

« Համայնք » - ի անունը առաջին անգամ լինելով յիշատակել
է Գարեգին Լեոնեանն իր « Հայոց պարբերական մամուլը, լիա-
կատար ցուցակ հայ լրագրութեան սկզբից մինչեւ մեր օրերը (1794-
1934 ») աշխատութեան մէջ: (Երևան, 1934 թ) : Լեոնեանը նոյն
ձևով, այդ մասին յիշել է նաև 1946 թին, իր լոյս ընծայած « Հայ
գիրքը եւ սլագրութեան արևսը » գրքում (էջ 239 - 240), ուր
ասած է.

« Իրանում Նոր Զուղայից յետոյ հայ սպարանի գոյու-
թիւնը Ռաշտ քաղաքում, յայտնի է դառնում այն բանով,
որ այնտեղ 1883 (պէտք է լինի 1880 Լ. Մ.) թին **,)
կարճ ժամանակով, Ալեքսանդր Աթաբէկեանի խմբա-

*) « Նոր Ազգարար » Կալկաթա, Ա. քհնյ. եղբարեան, 1953 թ. թիւ 9 -
11, էջ՝ 27:

**) Այդտեղ յիշած 1883 թիւը, ըստ մեր կարծիքի սլագրական սխալ է
եւ պէտք է լինի 1880, քանի որ 1934 թիւ իր աշխատութեան մէջ յիշած
է 1880, որից բացի դա պարզօրէն ներմում է նաեւ դրան յաջորդող պար-
բերութիւնից, ուր ասած է « 1880 » - ական քականներին, Թաւրիզում էլ
բացուել է սպարան » (նոյն էջ 236):

գրութեամբ հրատարակել է « Համայնք » անունով մի լրագիր: Մենք չենք տեսել այդ քերթը եւ ուրեմն չենք կարող ասել, թէ ումն է պատկանել այդ սպարանք եւ ուրիշ ինչ գործեր են լայս տեսել այդտեղ »:


14002-01
Լեոնեանի հետեողութեամբ « Համայնք » - ի անունը յիշատակել են նաեւ Յովհաննէս Պետրոսեանն ու Ամալիա Կիրակոսեանը իրենց աշխատութիւններէ մէջ, որոնցից բացի, այլ մասին յիշատակութիւններ ունեն նաեւ Վ. Վարդանեանը իր « Յովհաննէս Մաւեհեանը հրապարակախօս եւ խմբագիր » յօդածում, որը տպագրւել է « Գրական քերթ » - ի 1968 թւի Յուլիս 5 - ի համարում *), ինչպէս և Յ. Էլմարի (Յովսէփ Յովհաննիսեան) « Բաժնի » տարեգրքի Գ. հատորի մէջ (Թեհրան, 1971 թ. էջ 228), իր « Համառոտ ակնարկ Թեհրանի հայ համայնքի մօտիկ անցեալի մասին » յօդածի ժԲ « Պարբերական մամուլ » - ի բաժնում ասում է.

« Ինչպէս անցեալում էլ յիշել ենք (չկարողացայ իմանալ թէ որտեղ Լ. Մ.) պարսկահայ առաջին պարբերականը համարում է « Համայնք » անունով քերթը, որ հրատարակւելիս է եղել 1880 թին, Ռաշտում, դոհս. Ա. Արաբեկեանի խմբագրութեամբ:

« Շաւիղ » - ը պարսկահայ երկրորդ պարբերականն է »:

Մինչև վերջին՝ 1971 թւի վկայութիւնը, նկատի ունենալով, որ Լեոնեանից առաջ, մեր այլ բանասէրների կողմից հայ մամուլի մասին գրած իրենց աշխատութիւնների մէջ չեն յիշատակել « Համայնք » - ի անունը, ուստի 1970 թւի « Բաժնի » տարեգրքի Բ. հատորի մէջ (էջ 277 - 290), լոյս տեսաւ Զ. Գ. Հանանեանի մի բանասիրական յօդածը « Թեհրանի առաջին հայկական սպարանք եւ իրանահայ անդրանիկ պարբերականը » խորագրով, որտեղ վճռապէս հերքւել էր « Համայնք » - ի գոյութիւնը և իրանահայ առաջին պարբերականի պատիւը տրւել էր 1884 թւին, Թեհրանում տպագրւ-

*) Նոյնը տես նաեւ « Բաժնի » տարեգրքի. Ա. հատոր 1969 թ. էջ 331.



ւած « Շաւիղ » - ին:

1976 թւին Շաւափի կողմից « Ալիք » - ում լույս տեսած յօդ-
ւածաշարքին (4 Սեպտ. 19 Սեպտ.), ուր յիշւած էր « Համայնք » - ր
որպէս իրանահայ առաջին մամուլը, յաջորդեց Տաճատ Պողոսեանի
« Կարեւոր նշումներ եւ յատկումներ » յօդւածը (« Ալիք » 21 Հոկտ.
6 Նոյեմբ.), որտեղ խիստ աշխատել էր Շաւափը « Համայնք » - ր
իրանահայ առաջին պարբերականը համարելու մէջ:

Ելնելով վերոյիշեալ յօդւածների կարծիքներից, ինչպէս և ձեռքի
տակ ունենալով, մամուլում եղած, մի երկու այլ նշումներ, ինչպէս
« Բազմավեպ » - ում (« Հայ մամուլը տասն և հինգ տարւան մէջ »
Հ. Ս. Պոտուրեան, 1909 թ. Դեկտ. թիւ 12, էջ 540) և « Ղարա-
ղաղ » - ում (1913 թ. թիւ 3 - 4 էջ 36), ուր ասւած է.

« Շաւիղը իր առաջին իսկ համարով գրաւում է պարս-
կահայ ինքնիզնցիայի ուշադրութիւնը, Թէ կենտրոննե-
րում եւ քե գաւառական խուլ անկիւններում, արքնա-
նում է մի ուժեղ հնամբրութիւն, դէպի պարսկահայ
պարբերական մամուլի այդ անդրանիկ օրդանը (ընդ-
գրծումը մեր կողմից, Լ. Ս.), եւ ահա երկրի ամեն կող-
մերից տեսնում են թղթակցութիւններ ու գանազան յօդ-
ւածներ »:

Այս բոլորը նկատի ունենալով, մենք ևս քանի այլ տւեալնե-
րի վրայ յենւած, « Ալիք » - ի 1984 թւի 25 Յունիսի համարում
« Իրանահայ առաջին պարբերական մամուլի 90 - ամեակը » խո-
րադրով, ինչպէս և նոյն թերթի 1985 թւի Յուլիսի 29 - 31 հա-
մարներում « Պարսաստանի իրանահայ մամուլի 100 - ամեակին »
յօդւածով, եկանք հաստատելու, որ իրանահայ առաջին պարբերա-
կանը ոչ թէ 1880 թւին Ռաշտում տպագրւած կարծեցեալ « Հա -
մայնք » - ն է, այլ 1894 թւին, Թեհրանում տպագրւած « Շաւիղ » - ր:

Վերը նշւած թեր ու վէմ կարծիքներից յետոյ, մի նոր տեղե-
կութիւն եկաւ զօրացնելու այն միտքը, որ իրանահայ առաջին պար-

բերականը Ռաշտում դոքտ. Ալէքսանդր Աթաբէկեանի խմբագրութեամբ 1880 թւին, հրատարակւած « Լամայն » - ն է :

Ահա թէ ինչպէս :

Իրանի մեր պարսիկ հայրենակիցները, երբ որեւէ առիթով անդրադառնում են իրենց շրջանի պատմութեան, անհրաժեշտ են գրտնում դրա հետ տալու նաև տեղում ասլոդ հայերի պատմութիւնը, ահա այդ բերումով էլ, երբ 1987 թւին, Ռաշտից պարսիկ հայրենակից Զաֆար Սոմամիզադէն, մեզանից ուզեց իրանահայ առաջին շրջանի մի քանի մամուլի խորագրերի լուսապատճէն, որի առթիւ և սկսեց մեր նամակագրական կապը, պարզեց որ 1980 թւին, Ռաշտում « Դամուն » թերթի մէջ, մի յօււած ունի դրած բանասէր Ջահանգիր Սարթիփուրը « Առաջիններ Գիլանում » խորագրով, որտեղ և յիշեած է « Լամայն » - ի մասին :

Ստանալով այդ լրագրի լուսապատճէն, մի յօււածով և « Իրանահայ առաջին պարբերական » Լամայն » - ն է » խորագրով, անդրադարձանք « Ալի » - ի մէջ (21 Նոյեմբ. 1987 թ.) հաստատելով, որ իրանահայ առաջին մամուլը ոչ թէ 1894 թւի « Շաւիղ » - ն է, այլ 1880 թւին, Ռաշտում տպագրւած « Լամայն » - ը :

Ստորև թարգմանաբար բերում ենք, « Դամուն » - ի մէջ լոյս տեսած յօււածի այդ մասը :

« Առաջին ամսագիրը, որ Ռաշտ քաղաքում հրատարակւել է, հայերէն լեզուով մի պարբերական էր « Լամայն » անունով, որ 1880 Փրիչական քիւն, (1259 արեգակնային քիւն), նիտ հարիւր տարի առաջ, ընթերցողների ձեռքը հասաւ ևւ այս է լրագրի խորագիրը « Լամայն », « Լամայն » պարբերականի խմբագիրն ու հրատարակիչը Ռաշտում բնակւող յայտնի ևւ ճանաչւած հայ բժիշկներից էր, որ Սաբգէ Մէլիան քաղում տուն ու բժշկարան ուներ :

Դոքտ. Աթաբէկեանի տունը մի կայան էր ունետու հիւանդների համար, որոնք Թեհրանից կամ այլ քաղաք-

ներից, բժեկական նպասակով դեպի Եւրոպա էին նամ-
բորդում, մի էանի օր Ռաւեսում եւ յիշեալ բժեկի խը-
նամֆի ներքոյ հանգստանալուց յետոյ, նաւապարհում էին
դեպի իրենց նպասակակէք: Բժիշկ Աթաբէգեանը բժեկա-
կան աշխատանքի հետ միաժամանակ, զբաղուում եւ հաւեւ
գրական եւ քաղաքական աշխատանքներով եւ Ռաւեսի հա-
կաբոնապետական մարդկանց հետ համագործակցութիւն
ունէր: Նա կեանքի վերջին ժամանակներում մեկնեց
Ռաւեսից եւ այլեւս չվերադարձաւ:

Այնպէս է ըլլում, որ «Համայնք» պարբերականը
առաջին պարբերականն է, որ հրատարակել է Իււ-
նում» *)

Թէ՛հ «Դամուլն» ~ ում բերւած «Համայնք» ~ ի խորագիրը,
ինչպէս որ համեմատութիւնը ցոյց տուց, առնւած է Գարեգին Լեոն-
եանի «Հայ պարբերական մամուլը» գրքից, բայց եղած տեղե-
կութիւնը իր աւթողջութեան մէջ, եկու հաստատելու մինչ այդ ե-
ղած մի քանի դրական կարծիքները, որ իրանահայ առաջին պարբե-
րական մամուլը, թէ՛հ աննշան ազդեցութեամբ, բայց եղել է մաշ-
տում տպագրւած «Համայնք» ~ ը:

Բժիշկ Ալ. Աթաբէկեանի անունը բերւած է նաեւ դէպ. Արթին
Ս'եղպուրեանի «Հայ եւ ծագումով հայ բժիշկներ» գրքում, **) և
«Դրօշակ» ~ ի 1990 թւի 1 Օգոստոսի համարում (էջ 44):

Ինչպէս վերը յիշեց, կարծւում էր, որ «Համայնք» ~ ը, տեղա-
կան բնոյթ կրող և սահմանափակ ձևի մի պարբերական է եղել և չի
ունեցել այն ասպարէզն ու կատարել այն դերը, որ հիմնաւոր ձևով
պատկանում է «Շաւիղ» ~ ին: Այս առթիւ տեղին է մէջ բերենք
բանասէր Վ. Վարդանեանի կարծիքն ևս, որը տպագրւել է «Գրական

*) «Դամուլն» ~ Ռաւես, 1 Դէյ. 1359 թ. Բ. քաղան, Ա. քաղ. «Համայնք»

**) «Հայ եւ ծագումով հայ բժիշկներ 1688 - 1940» Ստամբուլ 1940 թ.
էջ՝ 8:

քերք» - ի մէջ:

«Յ. Մասէհեանի ջանքերով, 1894 թ. Յունւորի 2 - ին, Թեհրանում լոյս է տեսնում առաջին պարսկահայ «Շաւիղ» շաբաթաթերթը: Թէեւ դրանից առաջ, 1880 թ. Ռատսում հրատարակել է «Համայնք» Տպագիր օրգանը՝ Ալեքսանդր Արաբեգեանի խմբագրութեամբ, սակայն այն պարսկահայ անդրանիկ պարբերականը չի կարող համարւել, քանի որ տեղական բնոյթ ունէր եւ իր գոյութեան կարճ ընթացքում առանձին հետք չի թողել»: *

Ինչպէս Ն. Զուղայում տպագրւած առաջին գիրքը, որ յայտնի պարձաւ սրանից միայն երկու տասնամեակ առաջ՝ 1968 թւին, յուսալի է, որ մի օր էլ «Համայնք» - ից երևան կը գայ մի օրինակ, բայց մինչ այդ յայտնենք, որ Մ. Բաբլոյեանի ցուցակում տեղ գտած «Համայնք» անունով մի մամուլ, (էջ 48, համար 234), որը լոյս է տեսել Ժնևում և տպագրւել Փարիզում, խմբագրութեամբ Ալէքսանդր Աթաբէկեանի, եկաւ հաստատելու, որ Ռաշտում «Համայնք» անունով մամուլ չի տպագրւել, դա հէնց Ժնևի «Համայնք» - ն է, որ թերևս բժշկի Ժնևից Ռաշտ տեղափոխւելուց յետոյ էլ տպագրւել է մի քանի համար, բայց վստահաբար 1894-ից յետոյ: **)

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՏԱՐԲԵՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Այժմ երբ պարզւեց, որ իրանահայ առաջին պարբերականը «Շաւիղ» - ն է, որ տպագրւել է Թեհրանում, տեղին է որ համառօտ ձևով անդրադառնանք նախ դրան, ապա իրանահայ միւս քաղաքներում տպագրւած զէթ առաջին պարբերականներին և համառօտ ձևով նաև

*) «Բաճնի» տարեգիրք, 1969 թ. Ա. հատ. էջ՝ 131: Արտատպւած «Գրահական քերք» - ի 1968 թւի Յուլիս 5 - ի համարից:

**) Այս առթիւ անլի հանգամանօրէն տեսնել մեր յօդածը տպագրւած «Ալիփ» - ում (22 Յոգոսոս 1993 թ.)

միևսնեքի բնդհանուր պատկերին:

Իրանում տպագրւած առաջին մամուլը «Շաւիղ» շաբաթաթերթն է, որ սկսել է լոյս տեսնել 1894 թւի Յունւար 1 - ից Թեհրանում, խմբագրութեամբ Անդրէաս Բէզնազարեանի և տպագրւել «Ջաւահալ» տպարանում: «Շաւիղ» - ը իր գոյութիւնը պահել է միայն չորս տարի, մինչև 1897 թիւը, տպագրութեան յանձնելով տարեկան 50 համար:

«Շաւիղ» - ի մասին մեր մամուլում յիշատակութիւն շատ կայ, որոնց թւում նաև հայր Բաֆայէլ Կարապետեանի (Քոսեան) «Լիւսկասար ցուցակ հալ լրագրերու...» (Վիեննա 1924 թ. էջ 60), որ յիշել է նաև «Յաւելլիք» բաժնում (էջ 78): Նոյն ձևով կրկնւել է նաև Թաւրիզի «Պայքար» - ը (էջ 63 և 78) Սրանցից բացի, մի սխալութիւն է տեղի ունեցել նաև էջ 60 - ում, ուր «Շարժումն գրական իմաստասիրական» ամսաթերթի ներքոյ, սխալմամբ տեղ է դրել նաև «Շաւիղ» - ին վերաբերող մի երկու տող, որը պէտք է տպագրւէր Տիխիի «Շաւիղ» - ից յետոյ, որով և առաջացել է մի թիւրիմացութիւն, ծնունդ տալով մի «Շարժում» անունով մամուլի, որ երբեք գոյութիւն չի ունեցել Թեհրանում:

Այս մասին, շատ տրամաբանական ձևով անդրադարձել են նաև Զ. Գ. Հանանեանը և Տաճատ Պօղոսեանը «Բաժնի» տարեգրքում և «Ալիք» - ում տպագրած իրենց յօդածներում:

«Շաւիղ» - ից յետոյ Թեհրանում տպագրւած երկրորդ մամուլը «Ասդ արեւելեան» - ն է, որ տպագրւել է 1896 թւին, ապա մէկ և կէս տասնամեակի դադարից յետոյ 1912 թւին, սկսել է տպագրւել «Արեւալոյս» երկշաբաթաթերթը, որ միայն մէկ տարի է կեանք ունեցել: Դրանից յետոյ յաջորդ մամուլներն եղել են «Հորիզոն» - ն ու «Բոբոյս» - ը տպւած 1920 թւին, յետոյ «Ռանջբար Իրանի» 1921 թւին և այլն:

Սկսեալ 1931 թւից, սկսել է հրատարակւել նաև «Ալիք» - ը, նախ որպէս շաբաթաթերթ, յետոյ եռօրեայ և երկօրեայ, ապա օրա-

թերթի, որ շարունակում է տպագրվել մինչև հիմա:

Թեհրանում հրատարակած հայ մամուլը, թեով գերազանցում է միևս բոլոր քաղաքներին, իսկ երկրորդը հանդիսանում է Թաւրիզը և դա էլ հեռաւոր անցեալում, որին և անդրադառնում ենք համառօտ ձևով:

Թաւրիզում հրատարակած առաջին հայ մամուլն եղել է « Գործ »-ը, որ տպագրվել է 1903 թւին և միայն մէկ թիւ, խմբագրութեամբ Թեմակալ Առաջնորդ Եղիշէ ծ. վրդ. Մուրատեանի: Թաւրիզի յաջորդ պարբերականն եղել է « Ազդարար Առաջնորդարանի » շաբաթաթերթը, որ լոյս է տեսել 1904 - 1905 թւականներին, Առաջնորդական փոխանորդ Մաշտոց վրդ. Փափագեանի խմբագրութեամբ, տպագրւելով « Թեմական Տպարան » - ում:

20 - րդ դարի առաջին տասնամեակում, իրանահայ մամուլի ամենամեծ թիւը՝ շուրջ 4 - 5 անուն, տպագրվել է Թաւրիզում, առաջնութիւն զանելով Թեհրանից, բայց յետոյ գիջել է նրան: Թեհրանը այժմ ևս պահում է իր առաջնութիւնը, թէ մամուլի և թէ յատկապէս հայկական տպարանների թւի տեսակէտից:

Թաւրիզից յետոյ, Իրանի երրորդ քաղաքում, ուր պարբերական է հրատարակւել, եղել է Նոր Զուղան: Թէև Նոր Զուղան տպարանի ղեկով, առաջինն է ամբողջ Իրանում և Միջին Արևելքում, բայց հայերէն մամուլի տպագրութեան խնդրում, երրորդ տեղն ունի, գիջելով Թեհրանին և Թաւրիզին:

Նոր Զուղայում առաջին հայ մամուլը « Նոր Զուղայի Լրաբեր » - ն է, որ տպագրվել է 1904 - 1908 թւականներին, խմբագրութեամբ Առաջնորդական փոխանորդ Բազրատ վրդ. Վարդապարեանի:

Զուղայի երկրորդ մամուլը « Բրիտանական և արսափն Աւստրաւեշի ընկերութեան շաբաթաթերթ » - ն է, որ տպագրվել է Վանքի տպարանում 1908 - 1911 թւականներին, իսկ երրորդը՝ « Ընկեր »- ամսագիրը, որ լոյս է տեսել 1920 թւին, որպէս օրվան Հայ սկաու-

տական կազմակերպութեան, խմբագրութեամբ սկսող տապետ Յովսէփ Աբգարեանի: *)

Զուգայում սրանցից բացի այլ տպագիր մամուլ չի հրատարակել, այլ միայն խմորատիպ և մեքենագիր ~ բազմացած, որոնց մասին կ'իտանք իր տեղում:

*

* *

Անհրաժեշտ ենք գտնում այստեղ, մի համառօտ ակնարկ նետել նաև հայ տպարանների վրայ և դէթ առաջինները յիշել և թւել նաև միւսները, ընդհանուր մի գաղափար տալու համար իրանահայ տպարանների մասին: **)

Նոր Զուգա

Ինչպէս յայտնի է, Իրանում և ամբողջ Միջին Արևելքում, առաջին տպարանը հիմնել է Նոր Զուգայում 1636 - 37 թւականներին, Առաջնորդ Խաչատուր վրդ. Կեսարացու ջանքերով, ուր 1638 թւին տպագրել է առաջին գիրքը « Սաղմոս » խորագրով:

Այս գրքից մինչև այժմ գտնւել է միայն մէկ օրինակ, որը պահւում է Անդրիայի Օքսֆորդ քաղաքի Բուլէյան գրադարանում, իսկ լուսապատճէնը՝ Ն. Զուգայի Վանքի թանգարանում:

Վանքի տպարանի մասին, մամուլում եղած բազմաթիւ յօդւածներէից և գրքերում եղած յիշատակումներից բացի, 1912 թւին, Տիգրան Աբգարեանի, իսկ 1972 թւին, Լ. Գ. Մինասեանի կողմից լոյս են տեսել առանձին աշխատութիւններ, վերջինում տրւած է նաև տպարանի տպագրած գրքերի մատենագիտական ցանկը:

*) Զուգայում սպագրւած մամուլի մասին, մի փոքր անլի ընդարձակ տեսնել « Նոր Զուգայի տպարանը ... » Լ. Գ. Մ. Ն. Զ. 1972 էջ՝ 141 - 143:

**) Իրանահայ տպարանների և մամուլի մասին յիշւած է նաև « Մերձաւոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ » գրքում, Երևան, 1973 թ էջ 193 - 287:

Տպարանը թէև մի երկու անգամ, երկար ժամանակով դադարներ է ունեցել, բայց սկսեալ 1872 թից, աշխատում է մինչև այժմ:

Նոր Ջուղայում բացի վանքի տպարանից, աշխատել են նաև Կաթողիկ վարդապետների « Լազարիւս » և Ստեփանեան եղբայրների տպարանները, կարճ ժամանակով և սահմանափակ աշխատանքներով, Այս տպարաններից միայն վանքի տպարանում է, որ մասնու է տպագրւել, ինչպէս՝ « Նոր Ջուղայի լրագր » - ը, « Ընկեր » ամսագիրը և « Բրիտանական արտփն Աստ. ընկերութեան շաբաթաբեր » - ը, որ մենք անւանեցինք « Ն. Ջ. Աւետար »:

Թաւրիզ

Թաւրիզում առաջին տպարանը հիմնւել է 1888 թի վերջերին, որը նւէր է ստացւել մոսկւաքնակ վաճառական Յովհաննէս Յովնանեանի կողմից, համաձայն Ատրպատականի Թեմակալ Առաջնորդ Ստեփանոս Եպիսկոպոս Մխիթարեանի դիմումի, « Արամեան » դպրոցի անունով:

Այս տպարանում 1899 թին տպագրւել է « Ստրագրոթիւն Ս. Գեորգայ Վանաց (Մուղնի) » խորագրով գիրքը. Տպարանը յետոյ կոչւել է « Ասրպատականի Հայոց Թեմական տպարան », որը աշխատել է մինչև 1980 թիւը:

Թաւրիզում կարճ ժամանակով գործել են նաև « Իրան », « Փարոս » և մի երկու այլ տպարաններ: *)

Թեհրան

Թեհրանում առաջին տպարանը հիմնւել է 1880 - ական թականներին « Ջաւահայ տպարան » անունով, որը նւիրւել էր Ջաւայի հայերի կողմից, որտեղ և տպագրւել է Թեհրանի առաջին տպարանականը՝ « Շաւիղ » - ը:

Թեհրանում հետագային հիմնւել են մի շարք այլ տպարան-

*) Թաւրիզի տպարանների մասին տեսնել « Պատմութիւն Արամեան Ազգային դպրոցի » Հայկ Անեմնան, Թաւրիզ 1936 թ. էջ՝ 83 - 84 եւ « Մողերն տըպարանը ... » Լ. Գ. Մինասեան, Ն. Ջուղա 1984 թ. էջ՝ 13:

ներ, որոնց հնազոյններից են «Փարոս», «Մ'ոգերն», «Բոբոխ - Վե-
րածնունդ», «Իրանաշափ» և այլն, Ներկայիս Թեհրանում գոյու-
թիւն ունեն շուրջ մէկ տասնեակ հայկական տպարաններ, որոնցից
միայն 5 - 6 - ի մէջ է հայերէն գիրք կամ մամուլ տպագրւում, ո-
րոնցից յիշենք «Ալիփ», «Արախ», «Մասիս» (Նուրբախ), Մո-
դերն (Ջադիդ), «Նայիրի» և այլն, որոնցից «Ալիփ» - ի և «Նա-
լիր» - ի մէջ ամենից շատ գրքեր են տպագրւում: *)

Արաղան

Իրանահայ տպարանների շարքում, պէտք է յիշատակել նաև մի
փոքր տպարանի անունը, որ գործել է Աբաղանում, հիմնաւած անհա-
տական միջոցներով, որն աշխատել է ձեռքով և մի քանի տասնամ-
եակի իր դոյութեամբ, բաւարարել է տեղական պահանջներին:

Տպարանը պատկանել է Յարութիւն Կայծակեանին և կոչւել է
«Կայծակեան տպարան»: Տպարանի հիմնման մասին Արամ Երեմ-
եանի «Մանկական երգեր» գրքոյկում (էջ 3 - 4) գրւած է.

«Դեռ 1935 թին, Արաղանում նա (Յարութիւն Կայծակեա-
նը, Լ. Մ.) փայտից պատրաստում էր տպագրական մի փոքրիկ մա-
մուլ, որը 7 անգամ ձեւափոխում է նւ այն կատարելագործում,
որ մի ժամում տպում է 600 ներկայացման տպեր նւ 400 յայ-
տատարութիւններ: Այդ տպարանումն էլ նա առաջին անգամ տ-
պում է «Բախտագուշակ» պատկերազարդ գրքոյկը, ապա Չարմա-
հալի գաւառի «Ուսումնասիրաց» Միութեան ծրագիր - կանոնագի-
րը: Նոյն տպարանից էլ ամեն տարի լոյս են տեսնում 'Նոր Տար-
ւայ համար գեղարեստական կտրեր»: **)

Տպարանը սկզբնական շրջանում եղել է խմորատիպ, որ ձեռքով
գրւել ու բազմացւել է, ինչպէս որ ցոյց է տալիս մեր ձեռքի տակ

*) Թեհրանի առաջին տպարանի մասին տեսնել «Բաֆֆի» տարեգիրք Բ.
հատ. 2. Գ. Հանանեանի յօդածը էջ' 277 - 284 նւ «Նոր Զոդայի տպա-
րանը» գրքում, Լ. Գ. Մինասեան, էջ' 13 - 14 նւ տպարանների մի ցանկ:

**) «Մանկական երգեր» Արամ Երեմեան, Թեհրան 1948 թ. էջ' 4:

եղած նոյն « Բախսագուռեակ » - ր, բայց յետոյ դարձել է օրինաւոր տպարան, մետաղեայ փոփոխւող տառերով, որոնցով տպագրւած յայտարարութիւնների և կարտերի նմոյշները ունենք մեր ձեռքում:

Այս տպարանը թէև, ինչպէս յիշեցինք, լայն գործունէութիւն չի ունեցել, բայց այդուհանդերձ, իր տեղն ունի մեր մշակութային կեանքում, անգամ իր այդ փոքր աշխատանքի մէջ իսկ: Տպարանը փակւել է 1962 - 63 թւականներին:

Վերոյիշեալ տպարաններից բացի, Նոր Զուղայում, Թաւրիզում և թէ Թեհրանում աշխատել են նաև վիմատիպ ու խմորատիպ տրպարաններ, մինչև լուսապտճէնահանման գործիքների ու գրամեքենաների երևան գալը: Որպէս հեշտ միջոց, մեքենագիր - բազմացւած ձևով ևս լոյս են տեսել գիրք ու մամուլ, որոնց մասին խօսելը արդէն դուրս է մեր նիւթից:

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԹԻԻԸ ԱՆՅԵԱԼՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՍ

Ինչպէս անցեալում ևս յիշւել է, Իրանահայ մամուլի ամենամեծ թիւը տպագրւել է Թեհրանում, ներկայիս ևս միայն Թեհրանում է որ ունենք հայ մամուլ:

Իրանահայ մամուլը իր սկզբնական օրերից մինչև այժմ ունեցել է երկու մեծ զարթոնք, մէկը երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին՝ 1944 - 50 - ական թւերին և մէկ էլ Իրանի յեղափոխութեան առաջին տարիներին՝ 1979 - 1985 - ական թւականներին:

Ստորև ներկայացնում ենք Իրանահայ մամուլի ամբողջական ցանկը տպագիր և թէ խմորատիպ, ինչպէս և ներկայումս հրատարակւողները, ըստ լոյս տեսած վայրերի:

Թիւ	Քաղաքներ	1 8 9 4 — 1 9 9 4		Գումար
		Տպագիր	Խմբարտիպ, ձեռագիր և այլն	
1	Թաւրիզ	16	24	40
2	Թեհրան	56	32	88
3	Նոր Զուղա	3	10	13
4	Աբադան	—	3	3
5	Այլ վայրեր	—	9	9
Գումար		75	78	153

Իրանում լոյս տեսնող մամուլի ամենատարէցը « Ալիփ » օրաթերթն է, որ սկսել է հրատարակել 1931 թւից, այսինքն աւելի քան վաթսուներեք տարի առաջ: Թեհրանում եղած ներկայի հայ մամուլն ունի հետևեալ պատկերը, որ բերում ենք այբբենական կարգով:

1. « Ալիփ » օրաթերթ:

2. « Արաֆա » (Արագ) ամսաթերթ:

3. « Սուրհանդակ » »

Վերի երեք մամուլից, առաջին երկուսը տպագիր են, իսկ վերջինը մեքենագիր - բազմացւած:

Սկսեալ համաշխարհային երկրորդ պատերազմից, հայ մամուլն Իրանում նոր թափ ստացաւ, բայց յետոյ ոմանք դադարեցին: Այդ թափը նորից վերսկսեց և մամուլն աճեց ու բազմացաւ, յատկապէս յեղափոխութիւնից յետոյ, սկսեալ 1980 - ական թւականներից, բայց դա ևս միայն մի քանի տարի տևեց և կրկին արգելքների ու դժարութիւնների պատճառով, դրանց թիւը աւելի նւազեց ու սահմանափակեց:

Նոր Զուղայում ևս, սկսեալ 1977 թւից, մեքենագիր - բազմացւած ձևով, լոյս էր տեսնում « Նոր Զուղայի տնկաւոր » - ն, որն ևս դադարեց 1980 թւին, թղթի սղութեան և նոր արտօնութեան

խնդրի բերումով և յետոյ շարունակեց ամսական եկեղեցական արարողութեանց ժամանակացոյցի և նւիրատուների ցանկերով:

Անցեալում ժողովրդական մամուլից բացի, իրանահայ դպրոցներէից ոմանք ևս հրատարակում էին մեքենագիր ~ բազմադաս իմացած կամ ձեռագիր ամսագրեր ու ամսաթերթեր, որոնք ևս նոր պայմանների բերումով դադարեցին բոլորովին:

Ներկայիս որպէս ժողովրդական լայն սպառում ունեցող օրաթերթ, միայն «Ալիք» ~ ն է, որ տպագրւում է Թեհրանում, իր սեփական տպարանում:

*

* *

Իրանում մամուլից բացի, ամէն տարի լոյս են տեսնում նաև մի քանի պատի և գրպանի օրացոյցներ: Սրանց թիւը մի քանի տարի առաջ բազմաճառով հասաւ մինչև մէկ տասնեակի, բայց յետոյ սկսեց պակսել, դառնալով 5 ~ 6 հատ, որոնցից միայն մէկն է տպագրւում Նոր Զողալում, իսկ միւս 5 ~ 6 Թեհրանում: *)

Ներկայիս եղած օրացոյցները հետևեալներն են:

1. «ԲաՖՖի», տպագրւում է 1942 թւից:

2. «Նալիրի» » » 1954 թւից:

3. «Կանքեղ» » » 1960 թւից:

4. «Սբ. Ամենափրկիչ Վանքի եկեղեցական օրացոյց» տպագրւում է սկսեալ 1878 թւից և ունեցել է մի երկու անգամաւ ընդհատում:

Բացի վերի երեք պատի օրացոյցներից անցեալում, տպագրւել են նաև այլ օրացոյցներ, ինչպէս և գրպանի օրացոյցներ: Այժմ

*) Իրանահայ 1965 եւ 1982 թւերի օրացոյցների մասին տեսնել «Ալիք» օրաթերթ 1965 թ. 25 Մայիս եւ Ն. Զ. Վանքի օրացոյց 1983 թ. էջ՝ 153 - 156:

գրպանի օրացոյց են տպագրուած նաեւ « Բաֆֆի » և « Նայիրի » օրացոյցները: *)

Բացի պատի և գրպանի օրացոյցներէից, հրատարակել են նաեւ մեծ կամ պոստկարտի շափերի, մէկէջեան օրացոյցներ, թղթի և անգամ կտորի վրայ տպագրւած:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՅՈՒՅԱԿՆԵՐՈՒՄ

ՏԵՂ ԳՏԱԾ, ԲԱՅՑ ԶԵՂԱԾ ՄԱՄՈՒԼՆԵՐ

Հայ մամուլի մատենագիտական ցուցակներում, երբեմն տեղ են դրել աշնայիսի անուններ, որ բնաւ դոյութիւն չեն ունեցել: Այդ ցուցակներէից յիշենք միայն երկուսը « Հայ մամուլի ցուցահանդէս » Ա. Տ. Խաչատրեան, Բէյրութ 1963 թ. և « Հայ պարբերական մամուլի մատենագիտութիւն » Ա. Կիրակոսեան, Երևան, 1970 թ., որոնց հետեւելով ուրիշներն ևս գրել և արդէն վաւերական են դարձրել:

Ստորեւ տալիս ենք դրանց ցանկը, անհրաժեշտ լուսաբանութիւններով:

1. Զանգակ.
2. Իրանի առաւօտ.
3. Խաչ բառ.
4. Նոր Զուլայի Աւեսաբեր.
5. Շարժում.
6. Պնկնիֆա.

1. Զանգակ. Առաջին անգամ անունը յիշել է Ա. Տ. Խաչատրեանի « Հայ մամուլի ցուցահանդէս » - ի ցանկում (էջ 19), որից և օգտւել է Ա. Կիրակոսեանը (էջ 274, համար 1779): Իրանում « Զանգակ » անունով մամուլ ծանօթ չէ մեզ, այլ « Զանգ »:

*) Իրանահայ օրացոյցների մասին տեսնել « Ալիֆ » 1965 թ. 25 Մայիսի եւ Վանքի 1983 թի օրացոյցի մէջ (էջ 153 - 156) մեր յօդածները:

որ տպագրւել է Թաւրիզում 1910 - 1922 թւերին: Կարծում ենք որ « Զանգ » - ը թիւրիմացաբար գրւել է « Զանգակ »:

2. Իրանի Առաւօտ. Անուներ առաջին անգամ բերել է Գ. Լևոն-եանը, իր գրքում (համար 925), մեզ յիշում է, որ դա պէտք է Թաւրիզի « Առաւօտ » - ը լինի, որ միւս նման մամուլներից դա-նադանելու համար գրւել է « Իրանի Առաւօտ »: Ա. Կիրակոսեանն ևս վերցրել է նրանից, առանց ստուգման ենթադրելու (էջ 288, հա-մար 1895): Թեհրանում ևս « Առաւօտ » անունով մամուլ կայ տը-պագրւած:

3. Խաչբաւ. Յիշած է էսմայիլ Ռայինի « Իրանիսնէ աւմա-նի » գրքում, (էջ 176), որը վերցրել է « Թարիխը մաթբուաթ վէ շէրքէ ֆարսի » գրքից (էջ 72), իսկ նա էլ էյվաւդ Բրաունից, Այդ գրքերում Բազրատ վարդապետը, որ դրա հրատարակիչն են համա-րում, վարձել է « Բազրադվար »: Այս առթիւ անհրաժեշտ լուսաբա-նութիւնը տւել ենք, « Նոր Զուղայի տեղեկատու » - ի մէջ գրած յօդւածում, (1979 թ. Նոյ. Դեկտ. էջ 33 - 34), 1909 թին վանքի տպարանում տպագրւել է մի փոքրիկ գրքոյկ « Խաչի ճառ » անու-նով, որ թարգմանւել է անգլերէնից, սա է, ենթադրում ենք, որ վարձել է « Խաչբաւ »:

4. Նոր Զուղայի Աւետարեւ. Առաջին անգամ յիշել է Ա. Տէր Խաչատրեանը, որին հետևելով, բերել է նաև Ա. Կիրակոսեանը իր գրքում (էջ 407, համար 274): Մեր կարծիքով սա էլ կամ « Նոր Զուղայի Լուսեւ. » - ը պէտք է լինի, որ թիւրիմացաբար « Աւե-տարեւ » է վարձել, կամ էլ Բրիտանական և արտաքին Աստւածա-շունչի ընկերութեան շաբաթաթերթը, որ գրեցինք մենք ևս:

5. Շարժում. Այս լրագրի անունը մի թիւրիմացութեան բե-րումով է, որ առաջ է եկել Ռաֆայէլ Կարապետեանի (Քոսեան) գրքում, դա էլ տպագրութեան հետևանքով, որի մասին խօսել ենք արդէն: Ուրիշներն ևս օգտւել են այդ գրքից:

6. Պնլճիֆա. Շատ հետաքրքիր է այս անունով « մամուլ » - ի

երևան գալու: Ա. Տէր Խաչատրեանը իր «Յուզահանդէս» - ի մէջ (էջ 19), Իրանահայ մամուլը վերջացնելուց յետոյ, տւել է Պելճիքայի հայ մամուլի ցանկը: Իրանահայ մամուլի վերջին անունը «Պարսկահայ» (տարեգիրք) - ն է, որից յետոյ եկել է Պելճիքեան, որ երկրի անուն է և գրած գլխադրերով: Ա. Կիրակոսեանը ճիշտ չանդրադառնալով, այն դարձրել է մամուլի անուն և բերել է իր «Բիբլիոգրաֆիա» - ի մէջ (էջ 425, համար 2872):

✱

✱ ✱

Իրանում հայերի հրատարակութեամբ կամ խմբագրութեամբ ևս տպագրւել է մամուլ, որոնցից ոմանց խորագիրը կամ մէկ էջը եղել է պարսկերէն, ինչպէս «Մասիս» - ը և այլն:

Ստորև բերում ենք նաև դրանց ցանկը:

1. Անդիտէ վէ հօնաւ (Միտք և արւեստ), ամսագիր 1958 թ. Թեհրան, 1960 թ.ին երեք համար տպագրւել է նաև հայերէն, խմբագրութեամբ Նասէր Վոսուդի և Հրայր Խալաթեանի:

2. Անուշիւրան. պարսկերէն և ֆրանսերէն լեզուներով, ամսագիր, Թեհրան 1930 թ. խմբագիր՝ իրաւաբան ղոքտ. Գոսպար Մաշուրեան:

3. Ասիայէ վասաքի. (Միջին Ասիա), Թեհրան, 1933 թ. խմբագիր Գրիգոր Նզիկեան:

4. Իրանէ Նօ. (Նոր Իրան), Օրաթերթ, Թեհրան, 1909 թ. Տէր և տնօրէն Սէյդ Մահամադ Շաքսթարի, օժանդակող՝ Համբարձում Բազիլ:

5. Իրանէ ֆնաքի (Մեծ Իրան), Ռաշտ 1928, շաբաթաթերթ, յետոյ երկօրեայ, խմբագիր՝ Գրիգոր Նզիկեան:

6. Իրանէ ֆօնունի (Արդի Իրան), Թեհրան, 1933 թ. արտօնատէր խմբագիր՝ Գրիգոր Նզիկեան: Ռուսերէն և պարսկերէն:

7. Անուն (Կանոն - օրէնք), Լոնդոն, 1889 թ. հրատարա-

կիչ - խմբագիր՝ Միրզա Մելքոն խան (Նէզամ օլ դովլէ):

8. Մադանխար. (Քաղաքակրթութիւն), կիսամսեայ, Թաւ-
րիզ 1883 - 84, ըստ էղւարդ Բրաունի, խմբագրւել է « Սադրա »
(Sadra) հայկական ներկայացուցչութեան կողմից:

9. Մաջալլէ մուսիղի. (Երաժշտական հանդէս), Թեհրան,
հրատ. Իրանի գեղարւեստից նախարարութեան, խմբագիր՝ դոքտ.
Զաւէն Յակոբեան:

10. Մեմարի ցովին. (Արդի Ճարտարապետութիւն), Թեհրան
արտոնատէր՝ Ճարտարապետ Վարդան Յովհաննիսեան:

11. Սեթարէ սինեմա. (Շարժանկարի աստղ), շաբաթաթերթ,
Թեհրան, Արտոնատէր՝ Պարոյր Գալստեան, խմբագիր՝ Ռոբերտ Էջ-
հարտ:

12. Ֆէր. (Միտք), Թաւրիզ, շաբաթաթերթ, 1912 թ. ար-
տոնատէր Ալէքսանդր Տէր Վարդանեան: *)

ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԻՐ ՀԱԿԱԴԻՐ ԿՈՂՄԵՐԸ

Մամուլի մատենադիտական ցանկերից թերեւս աւելի հետաքրա-
կան մի նիւթ է մամուլին անդրադառնալը, իր ունեցած դադափա-
րական ուղղութեան, հետեւած քաղաքականութեան, ունեցած վարկա-
յծին ու մտածելակերպին և այլն, որոնք կազմում են տւեալ մա-
մուլի համն ու հոտը, ազն ու սղպեղը և լաւ ու վատ կողմերը:

Վստահաբար, մի օր էլ կ' դրւի Իրանահայ մամուլի պատմու-

*) Աղբիւրներ՝

1. « Ալիֆ » 1979 թ. Սեպտ. 18 և 19, « Իրանահայ մամուլը »
Շաւաթ.

2. Իրաննանէ արմանի. էսմայիլ Ռային, Թեհրան, 1960 (1349) թ.

3. Թարիխէ քահիլի մաթբուաթ Իրան, Մոհիթ Թաբաթաբայի, Թեհրան,
1366 թ.

4. Թարիխէ Մաթբուաթէ Իրան վէ ջահան. Թեհրան, Զահանգիր Սալի-
ջու, 1348 թ.:

թիւնը և դրա հետ նաև հանդամանօրէն անդրադարձ կ' լինի դրանց ունեցած դերին, թափած ճիգերին ու արձանագրած յաջողութեան, վայելած ժողովրդականութեան և այլն, որոնք խիստ հետաքրքիր ու ուսանելի են՝ իրենց արծարծած խնդիրներով, դրած խմբադրականներով, օգտակար ու շինիչ առաջարկներով և մեր մշակոյթին ու ժողովրդին մատուցած ծառայութիւններով:

Վերոյիշեալ նիւթին անդրադառնալը զուրո՞ւ լինելով մեր նպատակից, միայն մի քանի խօսք ենք ուղղւած ասել իրանահայ մամուլի ներքին պայքարի և հակադիր կողմերի մասին, որ վստահաբար դրանից ոչ մի կողմն ևս չան չի ունեցել, բացի զուր ու անմիտ վէճերից, երկպառակութիւնից, քէն ու ոխ ստեղծելուց և անտեղի ուժերի ջլատումից:

Ինչպէս մամուլը բովանդակ աշխարհում, ընդհանրապէս, և հայկական մամուլը, յատկապէս Սփիւռքում, միշտ եղել է պայքարի մէջ, օտարի դէմ լինելուց բացի նաև իր եղբօր դէմ, ուստի իրանահայ մամուլն ևս չէր կարող բացառութիւն կազմել և դերձ մրնալ խիստ ու անհաշտ պայքարից:

Իրանահայ մամուլի միմեանց հակադրւելն ու պայքարը սկսւել է դրանց հրատարակութեան պեռևս առաջին օրերից՝ 1896 - 97 թւականներից, մէկ կողմից «Շաւիղ» - ի, իսկ միւս կողմից «Ասդարեւնեւան» - ի միջև:

Այս առթիւ առաջ ենք բերում Յ. Էլմարի «Բաճճի» տարեգրքում «Պարբերական մամուլը» խորագրով դրած յօդածից մի երկու պարբերութիւն: *)

«Այն իրողութիւնը, որ «Շաւիղ» - ի հրատարակութիւնից հազիւ երկու տարի յետոյ Թեհրանում լոյս է տեսնում նաեւ մի նոր տաբարբերք «Ասդարեւնեւան» անունով, Ս. Մակարեանի խմբագրութեամբ, 1896 - ին, իբր մրցակից

*) «Բաճճի» տարեգրք, Տ. Պողոսեան, Թեհրան, 1971 թ. Գ. տարի, էջ՝ 230 - 231:

(ընդգծումը մեր կողմից Լ. Մ.) «Շաւիղ» - ին ... «Շաւիղ» - ը իր յառաջադիմական, ազասախոհ մտքերով, հանդիսանում էր պարսկահայութեան «Մշակ» - ը (Գ. Արծրունու ժամանակի), իսկ «Աստղ Արեւելեան» - ն իր պահպանողական ուղղութեամբ, ներկայացնում էր պարսկահայութեան «Նոր - դար» - ը (Ս. Սպանդարեանի) կամ աւելի շուտ «Արձագանգ» - ը (Ա. Յովհաննիսեանի),

Յար եւ նման հայկական այլ հաստատմանում գոյութիւն ունեցող դրոյթին, Թեհրանի հայ մշտնորականութիւնն եւս բաժանւած էր երկու խմբակցութեան, որոնք երեւան են գալիս իրար դէմ վարած մրցակցութեամբ,

Օրէցօր խորանում են մամուլի մէջ տարւած վիճաբանութիւններն եւ աւելի քափ ստանում պայքարը,

Պայքարի մէջ է մտնում նաեւ գրականագէտ Վրթանէս Փափազեանը, որ այդ օրերին (1894 - 1896) իբր ուսուցիչ պաշտօնավարում էր Թեհրանի «Հայկազեան» դպրոցում...

Ներքին այս հակամարտութիւնները մի կողմից («Շաւիղ» - ի հրատարակչի եւ խմբագրի, Լ. Մ.), երկու թերթերի բանակոծիւր միւս կողմից եւ ճնշեսական եւ այլ դժուարութիւնները ներքոյ կողմից, պատճառ են դառնում, որ երկու թերթերն էլ դադարեն եւ պարսկահայութեան թողնեն առանց սեփական լրագրի»,

Մամուլի այս պայքարը, առաւել կամ նւազ սաստկութեամբ, շարունակւում է մինչև այսօր, բայց աւելի ուժեղ թափ է ստացել յատկապէս առաջին պատերազմից յետոյ, պարլամենտական ընտրութեան օրերին, ինչպէս և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, յատկապէս «Ա. լիք» և «Վերածնունդ» օրաթերթերի և միւս՝ նոր հրատարակւած համայնավարական գաղափարներ ունեցող մամուլի միջև: Նման մի պայքար սկսել է նաև Իրանի յեղափոխութեան սկզբնական օրերին, 1980 - ական թւականներին, բայց

այս վերջինը մի առաւելութիւն է ունեցել, որ փողաց չի իջել ու լուտանք տեղացել մէկը միւսի հասցէին, և դա էլ շնորհիւ այն հեռատեսութեան, որ ունեցել է ազգայնական (իմա « Ալիք » - ի), կողմը և լուռ է մնացել հակառակորդ կողմի քննադատութեանց և կամ տեղի ու անտեղի մեղադրանքների հանդէպ:

Պայքարը կարևոր է և անխուսափելի, բայց պէտք է լինի տեղին ու շինիչ և ոչ թէ անտեղի ու ավերիչ, կամ իգուր ու չգոյէ մեղադրանքներ ու անպատշաճ լուտանքներ թափել մէկը միւսի հասցէին, որոնք բացի վէրքն ավելի խորացնելուց, մթնոլորտը թունաւորելուց և ընդհանրական շահերին վնաս պատճառելուց, ուրիշ ոչ մի օգուտ չեն կարող ունենալ:

Այժմ, որ Հայաստանը վերագտել է իր ազատութիւնն ու անկախութիւնը, յուսալի է, որ մեր քաղաքական հոսանքներն ու տարբեր դադափար ու մտայնութեան տէր անհատներն ու կազմակերպութիւնները, փոխարէն միմեանց դէմ անհաշտ պայքար մղելու, կաշխատեն ավելի հեռատես ու լաւատես լինել և իրար կմօտենան ու համագործակցութեան և միասնակամութեան ոգով սատար կհանդիսանան մեր ժողովրդին ու կառավարութեան և իրենց շինիչ ու առողջ քննադատութիւններով ու առաջարկներով, ավելի կգօրացնեն նրան, ի շահ հայ ժողովրդի և նրա արդար դատի ու յաւերժութեան:



ՄԱՄՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Ա.

ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼ

1. ԱԶԴԱՐԱՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

1905

Թի. 12. Հարցի.

Թարգ. Յանգոյ 22

Շաբաթաթերթ, Թաւրից 1904 ~ 1905 թ. թիւ 1 ~ 34,
Հրատարակութիւն Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդա-
րանի:

Խմբագիր՝ Մաշտոց վրդ. Փափագեան: (Առաջնորդական փո-
խանորդ):

Ատրպատականի Հայոց Թեմական արագատիպ (տպարան),
Վաղամետիկ Եղիսաբէթ Միւրգաբէղեանի յիշատակին. էջ՝ 4,
մեծութիւն՝ թղթի 26 × 36 սմ:

Ծանօթ. Վանքի գրադարանում կայ թիւ 11 ~ 34 ~ ր, որից
պակասում են 16, 22 և 30 ~ ր:

2. ԱԶԴԱՐԱՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ


Սբ. զրային ճշմարտութիւններ բացայայտող Պարբերաթերթ, Հրատարակութիւն Ազգէնտիստ կամ Գալստական եկեղեցւոյ - Շաբաթապահ Գալստական, Թեհրան, 1947 թ.

Խմբագիր՝ Յովհաննէս Տէր Գրիգորեան:

Տպարան « Մոդերն » էջ՝ 12 - 16 Մեծութիւնը՝ 22 X 32 սմ:

Ծանօթ. Ձեռքի տակ ունեցել ենք երեք թիւ Մարտ, Յունիս և Սեպտեմբեր:

3. « ԱԼԻՔ »



Ազգային, քաղաքական և զրական օրաթերթ: Թեհրան 1931 - 1994 (շարունակուում է) Առաջին թիւը 22 Մարտ 1931 թւից, նախ շաբաթաթերթ (1931 ~ 1934) յետոյ երկօրեայ (1935 - 1940) ապա օրաթերթ (1941 ~ 1988): Թերթի հիմնադիրներն են եղել Ղոքտ. Յարութիւն Ստեփանեան, Ղոքտ. Վարդան Յովհաննիսեան, Ստեփան Խանբաբեան, Յովսէփ Թադէոսեան, Համբարձում Գրիգորեան և Եղիշէ Իշխանեան, Խմբագիրներն և օգնական խմբագիրներն են եղել մէկ կամ աւելի անգամներ՝

Յովսէփ Թադէոսեան,

Երւանդ Հայրապետեան,

Անդրէ Տէր Օհանեան,

Մանւէլ Մարութեան

Յովսէփ Յովհաննիսեան,

Տահատ Պօղոսեան,

Դոքտ. Բաղդիկ Մինասեան

Նորայր Պահլաւունի,

Անուշաւան Գրիգորեան

Արսէն Մամեան

Օշին Սուրէնեան

Հրայր Խալաթեան

Էդւարդ Երիցեան,

Նորայր Էլսայեան

Արտօնատէրեր՝

Դոկտ. Վարդան Յովհաննիսեան

» Արտաշէս Բաբալեան

» Խոստոմ Ստեփանեան

Ճարտ. Ալբերտ Աճէմեան

«Ալիք»-ն ունեցել է նաև մեծ թւով հրատարակչական բաժնի վարիչներ, ինչպէս Ֆերդինանդ Սիմոնեան, Մկրտում Մկրտչեան, Լևոն Քեալանթարեան, Համբարձում Տէրտէրեան, Սիսակ Առաքելեան և այլն:

Էջ՝ 4 ~ 8, մեծութ. 42 × 61 և 35 × 50 սմ: Տպարաններ՝ «Մոդերն», «Գարուն», «Ֆրանսուա Մալէք Քեարամ» և «Ալիք»:

Հրատարակած ժողովածուներ եւ բացառիկներ

ա. «Ալիք» - Ի ԺՈՂՈՎԱԾՈՒԻ 1931 ~ 1936 թ.

Տպարան «Մոդերն» 1937 թ. էջ՝ 286, մեծութ. 17 × 24 սմ.

բ. «Ալիք» ԲԱՅԱՌԻԿ ԹԻԻ

Նւիրւած Հայաստանի Հանրապետութեան երեսնամեակին 1918 ~ 28, Մայիս 1948 թ.:

Պատասխանատու խմբագիր՝ Վարդան Յովհաննիսեան,

էջ՝ 36, մեծ. 24. 5 × 34. 5 սմ:

Տպարան < Ֆրանսուա Մալէք Քարամ > :

գ. < Ա.Լ.Ի.Ք > - Ի ԲԱՑԱՌԱԿ

Նւիրւած Ն. Յ. Դաշնակցութեան 60 - ամեակին 1890-1950, էջ՝ 54, մեծ. 24. 5 × 34 սմ. : Տպարան < Ա.Ի.Ք > 1950 թ.

դ. < Ա.Լ.Ի.Ք > - Ի ԲԱՑԱՌԱԿ

Նւիրւած < Անմահ Դրոյի պայծառ յիշատակին > : 4, Մայիս 1956 թ. էջ՝ 96, մեծ. 22 × 29 սմ. : Տպարան < Ա.Ի.Ք >

ե. < Ա.Լ.Ի.Ք > - Ի 30 - ԱՄԵԱԿԸ

1931 - 1961 էջ՝ 254, մեծ. 17 × 24 սմ. : Տպարան < Ա.Ի.Ք >

զ. < Ա.Լ.Ի.Ք > - Ի ԲԱՑԱՌԱԿ

Նւիրւած < Ա.Ի.Ք > - Ի 40 ամեակին, 1931 - 1971, էջ՝ 60, մեծութ. 24, 5 × 34 սմ. : Տպարան < Ա.Ի.Ք > - 1971 թ.

է. < Ա.Լ.Ի.Ք > - Ի ԲԱՑԱՌԱԿ

50 - ամեակի առթիւ 1931 - 1981 էջ՝ 238, մեծութ. 16.5 × 23. 5 սմ. : Տպարան < Ա.Ի.Ք > 1981 թ.

ը. < Ա.Լ.Ի.Ք > - Ն ՈՒ ԻՐ ՏՊԱԳՐԱԾ ԳՐՔԵՐԸ

(Հիմնման 50 - ամեակի առթիւ) 1931 - 1981 Աշխատասիրեց՝ Լ. Գ. Մինասեան, էջ՝ 90, մեծութ. 16 × 23 սմ. : Տպարան < Ա.Ի.Ք > 1981 թ. Մեկնաո՝ էդւարդ Ասուածատրեան, Ի յիշատակ իւր մօր՝ Մարիամ Ասուածատրեանի,

թ. < Ա.Լ.Ի.Ք > - Ի ԲԱՑԱՌԱԿ

Նւիրւած Ապրիլ 24 - ին, պարսկերէն լեզուով, 1983 թ. 3 Օրդիբէհէշտ 1362 թ. էջ՝ 16, մեծութ. 25 × 35 սմ.

ժ. < Ա.Լ.Ի.Ք > - Ի ԲԱՑԱՌԱԿ

Նւիրւած Ապրիլ 24 - ին, 1985 թ. 23 Ապրիլ, էջ՝ 40 մեծութ. 25 × 35 սմ.

ժառ. « Ա.Լ.Ի.Ք. » ՕՐԱԹԵՐԹԻ ԲԱՑԱՌԻԿ « Հ. Յ. Դ. 100 - ԱՄԵԱԿԻ »

1990 թ. 20 Դեկ. էջ՝ 68, մեծ. 22 X 34 ս.մ.:

« Ա.Լ.Ի.Ք. » ~ ը Ապրիլ 24 ~ ի, Մայիս 28 ~ ի, Մշակոյթի օրւայ, Սեբրի դաշնագրի, Հ. Յ. Դ. օրւայ և այլ առիթներով հրատարակել է 12 ~ 16 էջանոց մեծ թւով բացառիկներ, ինչպէս և փոքրիկ դրճոյկաձև հրատարակութիւններ « Ա.Լ.Ի.Ք. գրական », « Ա.Լ.Ի.Ք. մանկական », « Ա.Լ.Ի.Ք. բժեկա - առողջապահական » « Ա.Լ.Ի.Ք. գիտական », « Ա.Լ.Ի.Ք. մարզական » « Ա.Լ.Ի.Ք. արւեստի » և այլն, որոնք չեն մտել սոյն ցանկի մէջ:

4. « Ա.Լ.Ի.Ք. » ԱՄՍԱԳԻՐ

1961 ~ 1963, արտօն, Ռոստոմ Ստեփանեան, Խմբագրական կազմ՝ Նորայր Պահլաւունի, Սամուէլ Սարուխանեան, Հրայր Խալաթեան, Հարպիկ Թամրազեան, էջ՝ 80 ~ 96, մեծ. 17 X 23 ս.մ.: Տպարան « Ա.Լ.Ի.Ք. »:

5. « Ա.Լ.Ի.Ք. » ՊԱՏԱՆԵԿԱՆ

Երկշաբաթաթերթ, 1969 ~ 1978, Արտօնատէր՝ զոքտ. Ռոստոմ Ստեփանեան, խմբագրական կազմ, ղակավարութեամբ Ժիւրայր Ղարիբեանի, էջ՝ 12 ~ 16 մեծութ. 24 X 34 ս.մ.:

6. ԱՂԱՂԱՆ

Երկամսեայ հանգէս, օրգան « Ղարադաղի Աղաղան գիւղի հայրենակցական Միութեան », Թաւրիզ, 1912 ~ 1913: Անունը 1913 թւից (թիւ 5 - ից) կոչւել է « Ղարադաղ »: Թէև վրան նշած չէ, բայց հանդէսը խմբագրւել է Վաղինակ Սարգսեանի (Իրանեանի) կողմից: էջ՝ 40, մեծ. 17 X 25, 5 ս.մ.: Տպարան « Փարոս »: Ա. թիւը 1912 թ. Յունւարին:

7. ԱՅԳ

Հանրամատչելի, ժողովրդական շաբաթաթերթ, 1912 ~ 1922,

8. ԱՇԽԱՏԱՆՔ

ԼՇԽՆԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ Զ 45 Համար 7302 ԽՍՀՄԿԱԿԱՆ ԿԱԼԻԴՅԱՆ

9. ԱՌԱՅՈՏ

မိုးမိုး

ငါတို့အားလုံးက အတူတူပဲ ဖြစ်နေကြတာကို တွေ့ရတာက အံ့ဩစရာပဲ။

Հասարակական, քաղաքական, պրական և տնտեսական շարա-

Թաթերթ, յետոյ եռօրեայ: Թաւրիդ, 1909 ~ 1911: Ա. Թիւր լոյս է տեսել 1909 թւի Օգոստոս 16 - ին (Կիրակի օր).*)

Արտօնատէր - խմբագիր՝ Հայրապետ Պանիրեան, խմբագրական կազմի միւս անդամներն են եղել՝ Զօրա Սազինեան, Բաղդասար Մելիք Բաղդասարեան, Աւագ Մելիք Վարդանեան, Սիմոն Բաղէն և Յովսէփ Յովհաննիսեան (Յ. Էլմար): Էջ՝ 4, մեծութ. 36×52 (երբեմն փոխւած): Տպարան «Բանուոր», Ատրպետականի Հայոց Թեմական Տպարան և 1911 թւին «Ուսմիկ» տպարան:

10. ԱՌԱՒՈՏ

Շաբաթաթերթ. Թեհրան, 1919 ~ 1920: Արտօնատէր և պատասխանատու խմբագիր ու հրատարակիչ՝ Համբարձում Բաղիլ, Տպարան է իրեն պատկանող «Թեհրան» տպարանում: Թերթը խմբագրել են փոխնիփոխ՝ Զօրա Սազինեան և Յովսէփ Յովհաննիսեան: Էջ՝ 2 և 4, մեծ. 45×60 ս.մ:

11. ԱՍՏՂ ԱՐԵՒԵԼԵԱՆ



Ազգային, զրական և քաղաքական շաբաթաթերթ, Թեհրան

*) Սրբ որոշ տպարանում գրւած է Սգ. 15, որ նիւթ չէ:

1896 թ.: Հրատարակութիւն «Աստղ Արեւելեան» ընկերութեան: Խմբագիր՝ Մակար Մակարեան: «Ջաւահայ» տպարան: էջ՝ 4, մեծթ. 34 × 50 ս.մ.:*)

12. ԱՐԱՐԱՏ

Ամսագիր, Հրատարակութիւն Հայ Մշակութային «Արարատ» Միութեան (Կազմակերպութեան), Թեհրան 1959-1960, պատասխանատու խմբագիր՝ Սեակ Սադիկեան: Տպարան «Ալիք» էջ՝ 32, մեծթ. 17 × 24. ս.մ.:



ՄԱԿԱՐ ՄԱԿԱՐԵԱՆ

13. ԱՐԱՔՍ

Գրական, մշակութային, հասարակական ամսագիր, Թեհրան 1987 թ. Մարտ ամսից 1994: Առաջին երկու համարը կրել է «Արաք» անունը: Իսկ յետոյ, փոխել է «Արաք» - ի: Ունի պարսկերէնի բաժին: Գլխավոր խմբագիր՝ Յակոբ Գրիգորեան: Ղրւում է նոր ուղղադրութեամբ: Տպարան «Նախու» թիւ էջ՝ 8-12, մեծթ. 30 × 43 ս.մ.: յետոյ 1989 Յունւարից՝ էջ՝ 30 × 6 մեծ՝ 21 × 29 սմ.

14. ԱՐԵՎԵԼԲ

ՀԱՅԿԱ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԴԻՐ

ԱՐԵՎԵԼԲ

ԳԵՂԱՐՅԱՆ, ԼԵՍԵՐՅԱՆԻՆ, ԿՐԱՎԵՆ ԹԵՐԻ



Քաղաքական, հասարակական, զրական թերթ, Եօրեայ:

•) Այս մամուլից չկայ Վանքի մամուլի հաւաքածուի մէջ, սրա համարների լուսապատկերներ հնոհակալութեամբ ստացւեց «Աստղ Արեւելեան» - ի խմբագրի հարս՝ Տկն. Արաք Մակարեանից Բոստոն: (ստացած վ.ինննալից)

Թաւրիզ 1944 - 1946, խմբագիր՝ Դաւիթ Գէորգեան: Գրւած է նոր ուղղադրութեամբ: Տպարանը յիշւած չէ: Բայց վստահաբար տպւել է Ատրպատականի Հայոց Թեմական տպարանում: Էջ՝ 24, մեծ թ. 32×44 ս.մ.:

15. ԱՐՄԷՆ

Ամսագիր, Թեհրան, 1963 թ. Հրատարակութիւն «Արարատ» Միութեան թատերական բաժնի: Խմբագրական մարմին: Գեղարեստական ձևաւորումը Արքի Յովհաննիսեանի: Տպարան «Մոդերն» էջ՝ 52, 22×27 ս.մ.: Լոյս է տեսել միայն երկու թիւ:

16. ԱՐՄԵՆՈՒՀԻ



Գրական, պատմագիտական և արւեստի ամսօրեայ հանդէս, 1949 - 1955, Թեհրան, Ա. Թիւր 1949 - ի Օղոստոսին: Արտօնատէր խմբագիր՝ Անդրէ Տէր Օհանեան: Խմբագրական կազմին մասնակցել են նաև Արամ Անտոնեան (Արմանտ), Սամուէլ Խաչիկեան և Նորայր Մամեան: Տպարան՝ «Մոդերն» էջ՝ 16, մեծ թ. 22×29 և 20×28 ս.մ.:

17. ԱՐՇԱԼՈՅՍ

ԱՐՇԱԼՈՅՍ

ԵՐԿՅԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկաթաթաթերթ, Թեհրան, 1912 թ. Ապրիլից: Արտօնա-

տէր ~ հրատարակիչ՝ Արսէն Միքայէլեան, ունեցել է խմբագրական կազմ, որին մասնակցել են Միքայէլ Ստեփանեան, Տիգրան Մնացականեան, Արշալոյս Սեիկեան, Աւագ Վարդանեան, Սիմոն Միրզայեան և Յովսէփ Յովհաննիսեան: Տպարան՝ « Փարոս » էջ՝ 16, մեծթ. 21 × 29 ս.մ.:

Ծանօթ. Ա. Ամուրեանը (Ա. Տէր Օհանեան), իր « Հ. Յ. Դ. Պարսկաստանում (Թեհ. 1950 թ էջ՝ 169) յիշել է նաև Զօրա Սալինեանի և Նիկոլ Աղբալեանի անունները, չյիշելով Ս. Միրզայեանի և Յ. Յովհաննիսեանի անունները:

18. ԱՐՇԱԼՈՅՍ

Պատանեկան շաբաթաթերթ, Հ. Յ. Դ. Պատանեկան Օրդան, Թաւրիզ 1918 - 1919, Սկզբում եղել է ձեռագիր, (1916 - 18) ապա դարձել է տպագիր, խմբագրողական մարմին: Հրատարակւել է Թաւրիզի պատանեկան (ապա ուսանողական) միութեան կողմից, գլխավորութեամբ Հայկ Իսախանեանի: Հետագայում խմբագրական կազմին մասնակցել է նաև Անդրէ Տէր Օհանեանը: Տպարան՝ Ատրպատականի Հայոց Թեմական տպարան, էջ՝ 2, մեծ, 30 × 44 ս.մ.:

19. ԱՐՈՒՍԵԱԿ

Քաղաքական, հասարակական, գրական, տնտեսական և իրանադիտական անկախ թերթ, Թեհրան, 1935 - 1936 թ. երկօրեայ: Արտօնատէր՝ խմբագիր՝ Արտաշէս Նաղարեան, Տպարան՝ « Էթէ-լաթ » էջ՝ 2 - 4 (նաև 2 թիւ 8 - ական էջ), Մեծ 27 × 35, 36. 5 × 51 և 38 × 56 ս.մ.:

20. ԱՐՈՒՍԵԱԿ

Քաղաքական, հասարակական, դիտական ու գրական անկախ օրաթերթ, Թեհրան, 1942 թ. Արտօնատէր ~ խմբագիր՝ Արտաշէս Նաղարեան (նախորդ « Արուսեակի » հրատարակիչը): Տր-

պարան « Մոդերն »: էջ՝ 2-4, մեծաւ. 36 x 50 ս.մ.:

21. ԱՐՓԻ


Գրական, գիտական, հասարակական Ամսագիր, Թեհրան 1949-1955 խմբագիր - հրատարակիչ՝ Յովսեփ Թադեոսեան, Տպարան «Մոլեբեր» : էջ՝ 64 ~ 72, մեծույթ. 17 x 24 ս.մ.:

22. ԱՐՓԻ

Մանկական բաժին (Յաւելած « Արփի » ամսագրի): Թե-
րաւն 1950 - 1953 խմբադիր Յովսէփ Թաղէստեան: Տպարան « Ի-
րանյակ »: Էջ՝ 16 - 24 մեծ թ. 17 × 24 ս.մ.:

23. ԲԱՆԻՈՐ

Քաղաքական և դրական շաբաթաթերթի, Թեհրան 1923-1925: Արտատպեր՝ Շեքուհ Գիլեզուսեան, Ունեցել է խմբագրական կոլլեգիա, գլխավորութեամբ Ղազար Սիմոնեանի: Տպարան «Բոսֆոր» և «Ընկ. Մոլերն»: Էջ՝ 2 և 4, մեծ թ. 42 x 58 ս.մ.:

24. *CONFIDENTIAL*

Շրջիծա - գաւեշտական երկշաբաթական, ապա շաբաթա-
թերթ, Թեհրան 1920 թ. Յունւարիից 1942 թ., սկզբում արտո-
նատէր՝ եղել է Արմենակ Աղասեանի, իսկ խմբագիրը՝ Հայկ Գա-

րապաշտը, բայց յետոյ արտօնատէլը ու խմբագիրն եղել է Հայկ Գարազաշտ: Տպարան « Ռովչանայի » և Փարոս » և յետոյ « Բոբոխ » ու « Վերածնունդ »: Մի քանի տարի տպագրւել է նաև « Վերածնունդ » - ի հետ և երբեմն նորից անջատւել: Ծաղրանկարները՝ Դևի, էջ՝ 4 - 8, մեծթ. 23 × 36, 28 × 40 և 40 × 56 ս.մ.: Համարւում է իրանահայ առաջին երգիծաթերթը:

25. ԲՈՒՌՈՒՆ

Պատանեկան և մանկական բաժին, հոգելոյս Արտաշէս Վարժապետեանի յիշատակին: Թեհրան, 1940 - 1943: Տպագրւել է « Բոբոխ » երկշաբաթաթերթի հետ, նոյն ծաւալով և երկու էջով, ապա առանձին էջակալումով քառածալ դարձել է 8 էջ, 20 × 28 ս.մ. մեծութեամբ: Խմբագիր Հայկ Գարազաշտ, Տպարան « Բոբոխ » (Վերածնունդ): 1942 թ.ի 22 Դեկտեմբերից միացել է « Վերածնունդ » - ին:

26. ԳԱՂԱՓԱՐ

Շաբաթաթերթ ապա եօթեայ, Թեհրան 1925 - 1927: Լոյս է տեսել Չորեքշաբթի և Կիրակի օրերը (1926 - ից): Արտօնատէր՝ Արտաշէս Բէգեան, Ունեցել է խմբագրական մարմին, գլխաւորութեամբ բժ. Արշակ Ղազարեանի: Տպարան « Ռովչանայի » էջ՝ 4, մեծթ. 40 × 55 ս.մ.:

27. ԳԱՐՈՒՆ

Ամսագիր, Հրատարակութիւն Հայ Պատանեկան Մշակութային Միութեան Թեհրան 1945 թիւ: Լոյս է տեսել միայն երկու համար: Տպարան՝ « Մոլեբն » էջ՝ ... մեծութիւն՝ ...

28. ԳԵՂԱՍԷՐ

Գրական, գեղարւեստական, աշակերտական ամսանախ: Թաւրիզ, 1919 թ. Ամսաթերթ, Ունեցել է խմբագրական կոլեգիա,

ղեկավարութեամբ Մուշեղ Յովհաննիսեանի: Ատրպատականի
Հայոց Թեմական Տպարան: Էջ՝ 24, մեծթ. 17 × 22 ս.մ:

Ծանօթ. « Գեղասէր » - ը փոխարինել է « Կոհակ » - ինչ Այս
առթիւ թիւ 1 - ի խմբագրականում ասւած է. « Այսօր « Կո-
հակ » - ը յանձնում ենք տպագրութեան « Գեղասէր » անունով,
խոր համոզւած լինելով, որ նա մեր Թաւրիզի և գաւառների
աշակերտական խղճուկ շրջաններում կը կատարի որոշ դեր, իր
ընտրած ասպարէզում, դերժ մնալով թէ քաղաքական և թէ կու-
սակցական խնդիրներէից »: Կայ Թաւրիզի « Ռոստոմ - Գասպար »
գրադարանում, թիւ 1 - 3 Ապրիլից - Յունիս:

29 ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԻԻՆՍՏ ՀԱՆԴԷՍ

Հրատարակութիւն Հայ Համալսարանականների ընդհանուր
Միութեան, թիւ 1 Թեհրան, 1946 թ. խմբագրական կազմ.
Տպարան « Մոլերն », էջ՝ 120, մեծթ. 15 × 20. 5 ս.մ.:

30 ԳՈՐԾ

Պարբերական, Թաւրիզ, 1903, Լոյս է տեսել միայ մէկ թիւ:
Հրատ. Ատրպատականի Հայոց Առաջնորդարանի, Խմբագիր Եղիշէ
Ծ. վրդ. Մուրադեան: Ատրպատականի Հայոց Թեմական Տպա-
րան էջ՝ 8, մեծթ. 28 × 38 ս.մ.:

31. ԶԱՆԿ

Քաղաքական - տնտեսական և գրական շաբաթաթերթ, Օր-
գան Սոց. Դեմոկ. Հնչակեան Կուսակցութեան, Թաւրիզ 1910 -
1922, խմբագիր՝ Ալէքսանդր Տէր Վարադեան: Ատրպատականի
Հայոց Թեմական տպարան և « Փարոս »: Էջ՝ 2 - 4, մեծթ.
37.5 × 55 և 48 × 64 ս.մ.:

32. ԷՐՕՍ

Գրական ժողովածու, Թեհրան 1950 թ. Ա. տարի: Հրատա-

րակութիւն « Էրոս » գրատան, խմբագրութեամբ Նորայր Ստեփանեանի: Տպագրւել է միայն մէկ թիւ: Տպարան « Իրանչափ »: Էջ՝ 72 մեծթ. 17.5 × 24.5 ս.մ:

33. ԸՆԿԵՐ

Ամսագիր, հրատ. Նոր Զուղայի « Բօյ Սկաուտս » Միութեան, Նոր Զուղա 1920 թ. խմբագիր՝ Ս. Մ. ղեկավարութեամբ սկաուտապետ Յովսէփ Աբգարեանի, տպագրւել է միայն երեք թիւ: Տպարան՝ Ամենափրկիչ Վանքի: Էջ՝ 16 - 18, մեծ. 18 × 24 ս.մ.:

34. ԹԱԻՐԻԶԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ 1910 - 1912: Հրատ. Ատրպատականի Հայոց Թեմի առաջնորդարանի: Խմբագիր՝ Կարապետ Եղսկ. Տէր Մկրտչեան: Ատրպատականի Հայոց Թեմական տպարան, էջ, ... մեծ

35. ԻՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԽՈՐ

Շաբաթաթերթ, յետոյ եռօրեայ, Թեհրան 1920 - 1921: Արտօնատէր: Վահան Մեսրոպեան, խմբագրական կոլեգիա: Տպարան « Թեհրան »՝ Առաջին համարը լոյս է տեսել 23 Հոկտեմբերին, էջ՝ 4, մեծթ. 41 × 56 ս.մ և 42 × 59:

Ծանօթ: Շաւաապի և Տ. Պօղոսեանի ցուցակներում, Արտօնատէր գրւած է Յարութիւն Պետրոսեան, որ ճիշտ չէ: Պատկանել է Հ. Յ. Դաշնակցութեան:

36. ԼՈՅՍ

Գրական, գիտական հանդէս: Թեհրան 1943 - 1945: Առաջին թիւը 1943 Հոկտեմբերին, խմբագրութեամբ՝ Յովսէփ Թաղէոսեանի, Համբարձում Գրիգորեանի և Տաճատ Պօղոսեանի: Տպարան « Մոդերն », էջ՝ 64 - 80, մեծթ. 17.5 × 26 ս.մ.:

37. ԼՈՒՍԱՔԵՐ

Մանկա - պատանեկական ամսագիր: Հրատարակութիւն « Լու-

սաբեր > ընկերակցութեան, Թեհրան, 1949 - 1971: Արտօնատէր՝ Աշոտ Մուրադխանեան, Ունեցել է հրատարակչական և խմբագրական կազմ, որին մասնակցել են՝ Ամատունի Արզումանեան, Արամ Գառօնէ, Անուշաւան Գրիգորեան, Ռուբիկ Գրիգորեան, Սամսոն Խաչիկեան, Մուշեղ Յովհաննիսեան, Բաղրատ Յարութիւնեան (Բ. Զիւանի) և Արտակ Բաղալեան: Վերջին տարիներին զրեթէ խմբագրել է միայն Արամ Գառօնէն: Տպարան՝ « Յրանսուա Մ'ալէք Քարամ >, « Ալիք >, « Անի >, « Մոպերն >, էջ՝ 32, մեծթ. 17 × 24 ս.մ.:

38. ԽՍԶԲԱՌ

Պարբերական, Թեհրան 1962 թ., խմբագրական կազմ՝ գլխաւորութ. Վարդան Նազարեանի: Տպարան < Մոլերն > էջ՝ 16 (շապիկով), մեծ. 14 × 21, 2 սմ. Լոյս է տեսել չորս թիւ:

39. ԽՕՍՔ

Գրական երկամսաթերթ, Թաւրիզ, 1913 թ. խմբագիր՝ Հրանդ Դարիբեան: Ատրպատականի Հայոց Թեմական տրպարան, լոյս է տեսել միայն երկու թիւ, էջ՝ 39, մեծ 14 × 21 ս.մ.:

40. ԾԻԱԾԱՆ



Գրական, մշակութային և հասարակական հանդէս: Թեհրան 1982: Հրատ. Ի. Ա. Մ. Միութեան երիտասարդական բաժնի: էջ՝ 40 - 64, մեծ, 17 × 24 ս.մ.: Գրւած է նոր ուղղագրութեամբ:

41. ԾԻԱԾԱՆ

Գրական, մշակութային և հասարակական ամսագիր: Թեհրան, 1982 - 88 չրատ. Ի. Ա. Մ. Միռնթեան, Արտոնատէր՝ Կարէն Օհանջանեան, Եպարան « Օթաղէ չափ » տպւել է նոր ուղղագրութեամբ, էջ՝ 16 ~ 48, մեծթ. 22 X 28, 5. ս.մ.

42. ՀԱԿԱՓԱՇԻՍՏ



Շաբաթաթերթ: Օրգան Ազերբայճանի հակաֆաշիստ Կոմիտէի: Թաւրիդ 1943 - 1945: Ունեցել է խմբագրական կոլեգիա, բայց ըստ Ա. Կ. ~ ի ցուցակի էջ՝ 115, խմբագրել է Դաւիթ Գէորգեանը, Ատրպատականի Հայոց Թեմական տպարան, էջ՝ 2-4, մեծթ, 35 X 55, 5 և 30 X 42 սմ:

43. ՀՈՐԻԶՈՆ

Հասարակագիտական - աշխատաւորական շաբաթաթերթ: Թեհրան 1920: Արտոնատէր՝ Յակոբ Յովհաննիսեան, խմբագրական կոլեկտիւ: Տպարան « Փարոս » էջ՝ 4. մեծոթ. 41 X 56 ս.մ: Լոյս է տեսել միայն 1 - 12 թիւ: Ա. թիւը 18 Ապրիլին:

Ծանօթ: Շաւասպը իր ցուցակում որպէս արտոնատէրի գրել է Յարութիւն Պետրոսեանի անունը, որպէս խմբագիր՝ Սիմոն Սիմոնեան, իսկ տպարան « Բոբոխ »: Մեզ չյաջողեց իմանալ աղբիւրը:

44. ՀՈՒՐ

Ամսագիրը «*روز*» Թեհրան 1971-1974: Արտօնատէր և պատասխանատու տնօրէն՝ Դոքտ. Գազիկ Յովակիմեան, տպարան «Նուրբախշ» Գրեթէ կէսով կէս հայերէն և պարսկերէն յօդաածներ են: Պարսկերէնը տպարան «Խուշէ» և «Վահիպ» էջ՝ 62 × 62 և 100 × 100 ~ քիչ տարբերութիւններով, համարների մէջ, Մեծ, 18 × 25 ս.մ: Առաջին թիւը լոյս է տեսել 1971 թ. Յուլիսին, իսկ վերջինը՝ 36 ~ Ը 1974 թ-ի Յունիսին:



45. ՂԱՐԱԳԱՂ

Հանրամատչելի պատկերազարդ ամսագիր: Օրդան Հարապաղի Աղաղան դիւղի Հայրենակցական Միութեան, Թաւրիզ 1913-1914 (փոխարինել է «Աղաղան» հանդէսին), խմբագիր՝ Վահինակ Սարգսեան (Իրանեան), Տպարան «Փարոս» էջ՝ 32 ~ 40 մեծթ. 17.5 × 26 ս.մ:

Ծանօթ. Շաւասպը որպէս խմբագիր յիշել է նաև Խաչատուր Գրիգորեանի անունը, աղբիւրը նշած չէ:

46. ՄԵՀԱՆ

Շաբաթաթերթ, Թեհրան, 1924 թ. հրատ. խմբագիր՝ Աւետիս Եղիայեան:

47. ՄԻՆԱՐԷԹ

Դրական, հասարակական և դիւղատնտեսական շաբաթաթերթ, Թաւրիզ 1919 ~ 1921 խմբագիր Առաքել Յարութիւնեան, Հետադաշում խմբադրական կազմին մասնակցել են նաև Անդրէ

Տէր Օհանեանն ու Վարդան Յովհաննիսեանը (Վ. Նէլի), Ատրպատականի Հայոց Թեմական տպարան: Էջ՝ 4 ~ 2, մեծթ. 36 × 56 և 33 × 49 ս.մ.:

48. ՄԻՏՔ

Ազգային ~ հասարակական, գրական և քաղաքական շաբաթաթերթ, Թաւրիդ 1912 ~ 1914 խմբադիր ~ հրատարակիչ՝ Ալէքսանդր Տէր Վարդանեանց, Տնօրէն՝ Սիւրան Բաղդասարեան: Առաջին թիւը լոյս է տեսել 1912 թ. Փետրւար 18 - ին, վերջինը 3 Մայիս 1912 թ.: Տպարան Ատրպատականի Հայոց Թեմական: Դրանից առաջ 1912 ~ ին տպարան « Փարոս » էջ՝ 4, մեծթ. 36.5 × 51.5 ս.մ.: (Ա. Կ. - ի ցուցակում գրւած է 1912 ~ 1918 և մեծութիւն 38 × 56 սմ.:

49. ՄՇԱԿՈՅԹ

Տեղեկագիր հայ Մշակութային Միութեան: Թեհրան 1944 թ. լոյս է տեսել միայն մէկ թիւ: Տպարան « Փարոս » էջ՝ 11, մեծթ. 20 × 27 ս.մ.:

50. ՆԱԻԱՍԱՐԴ


Ժողովածու գրականութեան և դիտութեան (երկամսեայ հանդէս), Թեհրան 1937 ~ 1939: Հրատարակութիւն Մկրտում Մկրտչեանի: Խմբադրութեամբ Յովսէփ Թաղէոսեանի և Տաճատ Պօղոսեանի: Տպարան « Մողերն » տպագրւել է 10 գիրք (Ա.~Ժ.) Ա. գիրք 1937 թ. Յուլիսին: Էջ՝ 64, մեծթ. 17 × 24 ս.մ.:

51. ՆՈՐ ԱՂԲԻԻ

Հրատարակչական մանկա ~ պատանեկան և այլ գրքերի տարեկան 12 գիրք: Թեհրան 1942 ~ 1948 խմբադրութեամբ Անդրէ Տէր Օհանեանի և Ոստանիկ Յովհաննիսեանի: Տպարան՝ « Փարոս », « Գարուն », « Գուտենբերկ », « Մողերն », « Անի », նկար-

յերը՝ աշխատանոց «Մանի» էջ՝ 12 - 36, մեծ. 18.5 × 21.5 և 16.5 × 23 ս. մ.:

52. ՆՈՐ ԱՅԳ



Շաբաթաթերթ, Թեհրան 1951 - 1953, Արտոնատեր՝ Ս. Սարգսեան. Տպագրւել է նոր ուղղագրութեամբ: Տպագրւել է «Վերածնունդ», «Գիւլան» և «Դանէշ» տպարաններում: Ա. համարը 16 Յուլիս 1951 թ. վերջինը՝ 14 Օգոստ. 1953 թ. էջ՝ 4, մեծթ. 35 × 50 և 30 × 45 ս. մ.:

53. ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐ

Գրական, գիտական, քաղաքական և հասարակական հանգէս (Յաւելւած «Գաղափար» - ի): Թեհրան 1926 թ. Ա. տարի խմբագիրը Բժ. Արշակ Ղազարեան: Տպարան «Ռովշանայի», տպագրւել է միայն մէկ թիւ: Վերջում ունի «Գաղափարի» գրապարան № 3, 1927 թ. էջմոնդ Ռոստանի «Սիրանդոդ Բերժրաւ» - ը, հերոսական կոմեդիա, հինգ արարւածով, Փրանս. թարգմ. Յ. Միրզայեան, էջ՝ 50, նոյն ծաւալով էջ՝ 400 + 50 մեծթ. 17 × 25 ս. մ.:

Ծանօթ. գրքի ա. էջին գրւած է 1926, իսկ շապիկի վրայ 1927, ուրեմ. սկսւել է տպւել 1926 - ին և վերջացել է 1927-ին:

54. ՆՈՐ ԷՋ

Ժողովածու Իրանահայ երիտասարդ գրողների, գիրք գրականութեան: Թեհրան 1935 - 1978, թիւ 1 - 19 հրատարակու-

Թիւն « Նոր էջ » գրական խմբակցութեան: Խմբակցութեան անդամներն են եղել հետեւեալները, որոնք գրեթէ իւրաքանչիւրը մէկ համարը խմբագրել է՝ Արմէն Գէս: Հր. Ֆալեան: Գալուստ Խանենց, Աշոտ Ասլան, Արշաւիր Մկրտչի, Թ. Բէն, Արա Յովհաննիսեան և Զօրայր Միրզայեան: Տպարան « Մոդերն » և վերջին երկուսը « Նայիրի » էջ՝ 64 - 207, մեծթ. 17, 5 × 22 ս. մ:

55. ՆՈՐ ԽՕՍՔ

Քաղաքական, հասարակական, գրական անկախ թերթ: Երկօրեայ: Թեհրան 1930 թ. Առաջին թիւը 6 Փետրուար, լոյս է տեսել Կիրակի, Երեքշաբթի և Հինգշաբթի օրերը: Արտօնատէր-խմբագիր՝ Սիմոն Սիմոնեան: Տպարան « Մոդերն » և « Բոսֆոր »: Տպագրել է նաև պարսկերէն լեզուով յօդածներ: Էջ՝ 4, մեծթ. 41 × 57 ս. մ:

56. ՆՈՐ ԽՕՈՔ

Շաբաթաթերթ. Հրատարակութիւն Թեհրանի Հայ Մշակութային Կազմակերպութեան: Թեհրան 1979 - 1980, խմբագիր՝ Սուրէն Համբարչեան, տպարան էջ՝ 8 - 12, մեծթ. 25 × 35 ս.մ:

57. ՆՈՐ ԿԵԱՆՔ

Քաղաքական, հասարակական և գրական թերթ: (Նախ եղել է եռօրեայ, ապա 1923 - ից շաբաթաթերթ: Ա. թիւը 20 Փետր. 1922 թ.): Առաջին համարի վրայ գրւած է « Լոյս » է տեսնում առայժմ շաբաթն երկու անգամ Հինգշաբթի և Կիրակի օրերը: Թեհրան 1922 - 1927 Արտօնատէր՝ Ստեփան Խանբաբեան 1924-ից՝ դոքտ. Վարդան Յովհաննիսեան, խմբագրական կօլէգիա: Տպարան « Փարոս » և « 1925 - ից « Ընկ. Մոդերն »: Էջ՝ 4, մեծ. 40 × 56 և 51 × 66 ս. մ.:

58. ՆՈՐ ՀԱՍԿԵՐ

Մանկա - պատանեկան պատկերազարդ երկշաբաթեայ հանդէս:

Թեհրան 1935 - 1937: Արտօնատէր - խմբագիր Մարգարիտ Սար-
վարեան, տպարան « Մոդերն », « Խաեամ » և « Նոր հասկեր »:
էջ՝ 24 (իւրաքանչիւր տարին ունի միացեալ էջեր 672), Ա.
Թիւր տպագրւել է 15 Սեպտ. 1935 - ին, իսկ վերջինը (Թերևս)
Թիւ 29 - ը 1937 թ. 15 Յունիսին: « Նոր հասկեր » տպարա-
նում է սկսել տպագրւել 1936 թ. 5 Յուլիսից: (Թիւ 4 - ից),
Մեծութ. 18, 5 × 25. 5 ս. մ.:

59. ՆՈՐ ՊԱՏԳԱՄ

Գրական - դեղարւեստական ամսագիր: Թեհրան 1924 - 1925:
Հրատարակութիւն « Միտք » Միութեան նւիրւած Յ. Ճերմակի
յիշատակին: Արտօնատէր՝ Յակոբ Յովհաննիսեան, խմբագիր
Մարգար Ղարաբէգեան (Դե), Տպարտն « Փարոս » էջ՝ 16 մեծթ.
20 × 28 ս. մ.:

60. ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱԻԵՏԱՔԵՐ

Շաբաթաթերթ: Նոր Զուղա 1908 - 1911, հրատարակութիւն
« Բրիտանական և արտաքին Աստւածաշունչի ընկերութեան »:
Տպարան՝ « Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ Վանքի »: Այլ ման-
րամասութիւններ պատկասում են, իսկ վերի խորագիրը անւա-
նական է, ճիշտ անունը չյաջողեցինք իմանալ:

Մանօր. Աւելի մանրամասն տեսնել « Նոր Զուղայի տպա-
րանը » Ն. Զ. 1972 թ. էջ՝ 141:) Նման մի անուն յիշել է
նաև Ա. Տէր Խաչատրեանը, արդե՞օք սա է, թէ « Լրաբնր » - ն
է դարձել « Աւեսաբնր »:

61. ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԼՐԱՔԵՐ

Ամսաթերթ, Նոր Զուղա 1904 - 1908, Հրատարակութիւն Ի-
րանա - Հնդկաստանի Հայոց Թեմի Առաջնորդարանի, խմբագիր՝
Բագրատ վրդ. Վարդապարեան, առաջնորդական տեղապահ:

ԵՐԱՆԻ
ՏԵՐԻ

ՇԱԽԻՂ

ԵՐԱՆԻ
ՏԵՐԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՆ ԵՎ ԳԵՂԵՍԵԱՆ ԲԵՐԵՐԵԹԵՐԻ

.ՇԱԽԻՂԻ ԼՈՍՏ Է ՏԵՐԱՌՈՒՄ ՏԱՐԵԼՈՒՆ ԵՐ ԼԱՄՈՒ ՇԱՄՍԻ ՍԵՐՈՒՆ

Ազգային, զրական և քաղաքական շաբաթաթերթ: Թեհրան 1894 - 1897 թ. արտոնատէր - խմբագիր՝ Անդրէաս Բէդնազարեանց: Թերթը խմբագրել են նախ Յովհաննէս Մասէհեանը, ապա Վրթանէս Փափաղեանը: Տպարան «Ջաւահայ» Լոյս է տեսել շաբաթայ Շաբաթ օրերը և տարեկան 50 համար: Ա. Թիւր 1 Յունւար 1894 թւին: Էջ՝ 4. մեծթ. 26. 5 x 35 և 35. 5 x 45 ս. մ.:

64. ՊԱՀԱԿ

ՊԱՀԱԿ

ԺԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԵՎ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԿՐԱՆ ԹԵՐԻ

روزانه سیاس اجتماعی و ادبی
صاحب انتشار موشن ماسینیان
ԱՐՏԱՆԱՏՈՐ Մ. ՄԱՍՏԵԱՆ
Հասցե՝ փ. Հեզմաթ,
Հանգստի ԵՎ,
تهران تیبان عدالت ننگد و ۳۰

ՀԱՏԱՀԱՏԱՐ 750 ԲԻՐ

ԲԱՔԱՆՈՐԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ
Տարեկան — 200 Բ.
Վեց ամիս — 100 Բ.
Երեք ամիս — 50 Բ.

Հեռ. խմբագրար՝ 3-30-61
• տպարան՝ 3-00-31

№ 4
ՍԵՊՏԵՄԲԵՐ
9
ԵՐԿՂՇԹԻ
1915

Քաղաքական, հասարակական և զրական ամսագիր: Թեհրան 1951 - 1952: Արտոնատէր և պատասխանատու խմբագիր՝ Մուշեղ Մաստեան, ունեցել է խմբագրական կոլեգիա: Տպարան «Ալվան» էջ՝ 32 - 38, մեծթ. 16. 5 x 23 ս. մ.: Տպագրւել է նոր ուղղադրութեամբ: Դաւնօր. սրա առաջին թիւը լոյս է տեսել 1951 թւի Մայիսի 1 - ին, որպէս, «Պահակ ժողովածու» քաղկացած 64 էջից:

65. ՊԱՀԱԿ

Քաղաքական - հասարակական եւ զրական երկօրեայ թերթ: Թեհրան, 1952 թ., արտոնատէր՝ Մուշեղ Մաստեան, ունեցել է

խմբագրական մարմին: Տպարան՝ « Ալւան »: էջ՝ 4, մեծթ. 25. 5 × 35. 5 ս. մ.: Տպադրւել է նոր ուղղադրութեամբ: Առաջին թիւը՝ 2 Սեպտեմբերին, իսկ վերջինը՝ 28 Հոկտեմբերին, ընդամենը 21 համար: *)

66 ՊԱՅՔԱՐ

Շաբաթաթերթ, օրգան Թաւրիզի Սոց. Դեմ. Հնչակեան երիտասարդական Միութեան, Թաւրիզ, 1918 - 1919, խմբագրական մարմին, էջ՝ 4, մեծութ. 29 × 38 ս. մ.: Տպարան « Փարոս »: (?)

67. ՊԱՐՍԿԱՆԱՅ ՏԱՐԵՅՈՅՅ

Թեհրան 1927, 1929 և 1930, խմբագիր և հրատարակիչ՝ Հայկ Գարաղաշ, տպարան « Փարոս », տպագրւել է միայն երեք տարի, էջ՝ Ա. 276, Բ. 443 + 44, Գ. 376 + 32, մեծութիւն՝ 16. 5 × 24 և 15. 5 × 21 ս. մ.:

68. ՌԱՆՋԲԱՐ ԻՐԱՆԻ

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՆՊԱՅՈՒՆՈՐԻ ԲՈՒՆՈՐ ԾՐՈՐԾՈՐԻ, ՄԱՍԷՐԷ.

ՄԻՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՑՈՐ

Հասարակական, աշխատաւորական շաբաթաթերթ, Թեհրան 1921 - 1924, Արտօնատէր - խմբագիր՝ Վահան Մեսրոբեան, Տպարան « Թեհրան և ընկ. » (Պողոտ. Լալեգար) և « Մոդերն »: էջ՝ 2, մեծթ. 40. 5 × 55 ս. մ.: (Մանօթ. փիլեկն պատկանում է թիւ 35-ին)

•) Ա. Բաբլոյանի ցուցակում գրւած է 18 համար:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՊՐԱԿԱՆ ՓՐԱՔԵՐԲ

ՔՐԵՏՆԱԿԱՆ ԽՈՐՀԱՆՈՒՄ ԶԵՐ ԵՊՈՒՄԵՆ

Քաղաքական - հասարակական - դրական օրաթերթ, Արտոնատեր - խաբադիր՝ Հայկ Գաբրիելյան 1930 ~ 1953, նախագահ եղել է շաբաթաթերթ. մինչև 1941 թիվը, յետոյ երկօրեայ, 1943 ~ ին օրաթերթ, 1950 - 51 - ին շաբաթաթերթ, 1952-ին եռօրեայ և երկօրեայ, 1949 - ին ~ 50 թվերին (Մարտ 29-ից մինչև 1950 թվի Յունիս 24 - ը) ունեցել է շուրջ 15 ամսեայ դադար: Էջ՝ 2 - 8 և 12, մեծ. 29×43 30 $\times$ 41 և 42×60 ս. մ: Դադարել է 1953 թ. Հոկտ. 28 - ին տպագրելով 2491 թիվ: Տպարան « Փարոս », « Բոբոխ » և « Վերածնունդ »:

Ա. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

1947 թ. բացառիկ թիվ 29 նոյեմբեր. նւիրւած Սովետական Հայաստանի 27 - րդ տարեդարձին՝ 29 նոյեմբերին: Արտոնատեր - խաբադիր՝ Հայկ Գաբրիելյան, Էջ՝ 40, մեծթ. 30×40 ս. մ.:

Բ. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Բացառիկ թիվ, նւիրւած թերթի 2000 թվին: Թեհրան 1948 թ. 15 Յունիս Արտ. խաբադիր՝ Հայկ Գաբրիելյան, Էջ՝ 26 (էջակալւած չէ), Մեծթ 30×40 ս. մ.:

Գ. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Բացառիկ թիվ նւիրւած Սովետական Հայաստանի 28 - րդ տարեդարձին: Թեհրան 29 Նոյ. 1948 թ. Արտոն. խաբադիր՝

Հայկ Գարադաշ. էջ՝ 26 մեծթ. 30 × 40 ս. մ.:

Գ. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Բացառիկ թիւ. նւիրւած Սովետական Հայաստանի 31 - րդ տարեդարձին, Թեհրան 1 Դեկտ. 1951 թ. Արտ. խմբադիր՝ Հայկ Գարադաշ. էջ՝ 8, մեծ. 30 × 45 ս. մ.:

Ե. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ


Բացառիկ թիւ նւիրւած Սովետ. Հայաստանի 32 - րդ տարեդարձին: Թեհրան 29 Նոյ. 1952 թ. Արտ. խմբադիր՝ Հայկ Գարադաշ: էջ՝ 42 մեծթ. 22 × 30 ս. մ.:

70. ՎԵՐԵԼՔ

Քաղաքական, հասարակական և գրական շաբաթաթերթ: Թաւրիդ, 1952 թ.: Արտօնատէր խմբադիր՝ Արամայիս Արզումանեան: Գրւած է նոր ուղղադրութեամբ: Առաջին թիւը լոյս է տեսել 23 Մարտին, իսկ վերջինը՝ 12 - րդ, 15 Յունիսին: Ատըրպատականի Հայոց Թեմական տպարան: էջ՝ 4, մեծթ. 30, 5 × 46 ս. մ.:

71. ԲԱՅՅԻ ՏԱՐԵԳԻՐՔ

Թեհրան, 1969, 1970 և 1971 թ. Հրատարակիչ խմբադիր՝ Տաճատ Պօղոսեան: Լոյս է տեսել երեք թիւ: Վերջին թիւը, որ մնացել էր թերի, լոյս տեսաւ 1984 թւին, դատե՛ր՝ Արմինէ Պօղոսեանի կողմից, խմբադրութեամբ՝ Լ. Գ. Մինասեանի: Ա. հատոր 1969 թ. էջ՝ 583, Բ. հատոր 1970 էջ՝ 688, Գ. հատոր 1971 էջ՝ 263, մեծութիւն 17. 5 × 24 ս. մ. Տպարան «Մոդերն», իսկ Գ. հատորի լրացուցիչ փոքր մասը, Ն. Զ. Վանքի տպարան:



72. ՅԱԽԱՒԵԼ



ԵՐԳԻԾԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

روزنامه فکاهی «ساخاول»
 صاحب امتیاز و مدیر مسئول پروانه میرزاییان
 تیرماه سال ۱۳۸۰
 Rédaction du Journal humoristique
 „TZAHAVEL“
 Rédacteur: SEVARD BAZEN
 Av. Hafez (Ussoubad) N 1788 Téhéran

№ 2 (101) 2. ՏԱՐԻ Լ. Փ. ՄԻՆԱՍՅԱՆ 1 Յուլի, 1984

Երգիծական ժողովածու: Թեհրան 1643 - 1944 Արտոնատէր-
 խմբագիր՝ Երևանի Բագէն Միրզայեան (Ես եմ), Տպարան «Մո-
 դերն» և «Անի»: Առաջին համարը 1 Սեպտ. 1643 թ. էջ՝ 18-
 20, մեծ թ. 18 × 22. 5 և 23 × 31 ս. մ. Տպագրւել է միայն
 8 համար:

73. ՅԱԽԱՒԵԼ

Երգիծական երկչաբաթաթերթ: Թեհրան 1950 - 1958 Արտո-
 խմբագիր՝ Երևանի Բագէն Միրզայեան (Ես եմ), Տպարան՝
 «Իրանշահ» և «Անի» և «Ալվան», մի քանի անգամ փոխնի-
 փոխ: Առաջին համարը 15 Ապրիլ 1950 թիւ. վերջինը 15 Յունւ.
 1958 թ. թիւ 1 - ի մօտ փակագծի մէջ զրւած է 9, որ նշանա-
 կում է նախորդ ժողովածուն ևս հաշւել է զրա վրայ, էջ՝ 8-12
 մեծ. 25 × 35. 5 ս. մ.:

74. ՓԻՆՆԻԿ



Քաղաքական, հասարակական և դրական շաբաթաթերթ: Թեհ-
 րան 1979 - 1983 (Ա. թիւը 24 Մայիսի 1979 թ), Արտոնա-
 տէր և պատասխանատու խմբագիր՝ Ժորժ Համբարձեան: Տպա-

գրքեր է նոր ուղղագրութեամբ: Տպարան՝ « Քարուն » էջ՝ 4 ~ 8
մեծթ. 30 × 45 ս. մ.:

75. ՕՏԱՐ ՓՈԻՆՋԵՐ

Թարգմանական ~ գրական, գեղարվեստական հանդէս: Թաւ-
րից 1913 թ. Ա. գիրք: Խմբագիր ~ Հրատարակիչ՝ Ալեքսանդր
Մելիք Վարդանեան: Ատրպատականի Հայոց Թեմական տպարան:
էջ՝ 159, մեծթ. 15. 5 × 23 ս. մ.:

Բ.

ՄԵՔԵՆԱԳԻՐ ԲԱԶՄԱՑԻԱԾ

ԵՒ

ՋԵՌԱԳԻՐ ՄԱՄՈՒԼ

1. ԱԶԴԱՐԱՐ



Ամսագիր Շիրազ, մեքենագիր ~ բաղմապաշտ 1981 ~ 82 թ.
Հրատարակութիւն Շիրազի հայագիտական դասընթացների ար-
տագասարանային աշխատանքների խմբագիր՝ ~ Արմինէ Առա-
քելեան, էջ՝ 18 ~ 24 մեծթ. 21 × 30 ս. մ.:

2. ԱՂԲԻԻՐ

Ամսագիր, Թեհրան, մեք. բաղմ. 1954 ~ 1960, 4 ~ 8 էջ՝
(մէկ էջի վրայ) մեծ. 21 × 33 ս. մ.:

3. ԱՅԲՈՒԲԵՆ

Պարբերական, Թեհրան, մեք. բազմ. 1981 ~ 82, Հրատարակութիւն, Հայ Մշակութային « Սիփան » Միութեան, Ազգային ~ հասարակական, մշակութային ~ զրական հանդէս, խմբագրական կազմ, էջ՝ 42, մեծ. 21 × 29 ս. մ.:

4. ԱՆԱՀԻՏ

Ամսագիր, Թեհրան, մեք. բազմ. 1972 թ.

5. ԱՆԱՀԻՏ

Ամսագիր, Աբադան, մեք. բազմ. 1968 ~ 69 Հրատ. Աբադանի « Աղաբ » Ազգ. հայոց զպրոցի աշակերտական Միութեան, խմբագիր՝ վ. Ղ. էջ՝ 24 (Ա. էջը տպւած) մեծութ. 22 × 28 ս. մ.: Ունի նաև պարսկերէն բաժին:

6. ԱՆԱՊԱՏԻ ԾԱՂԻԿ

Մարաղայ, 1925 թ. Հրատ. Պատանեկան Միութեան:

7. ԱՇԱԿԵՐՏ

Պարբերական. Թեհրան 1979 - 83 մեք. բազմ. Օրդան Հ. Յ. Դ. պատ.

կազմակերպութեան: Խմբագրական կազմ. էջ՝ 24 ~ 64, մեծ. 24 × 30 և 17 × 24 ս. մ.:

8. ԱՇԱԿԵՐՏԻ ԶԱՅՆ

Ամսագիր, Թեհրան, մեք. բազմ. 1979 թ. Զեռնարկ (Հ.Յ.Դ.) պատ. կազմակերպութեան, էջ՝ 14 ~ 24, մեծ. 20.5 × 25 և 24 × 30 ս. մ.:



9. ԱՍԵՂ

Թեհրան, խմորատիպ, 1920 թ.

10. ԱՐԱՔՍ

Շաբաթաթերթ, Գիւլշի գիւղ. 1939 ~ 1940 Օրգան, Գիւլշի գիւղի գպրոցի «Աւակներսական Միութեան» Ձեռագիր:

11. ԱՐԱՐԱՏ

Տեղեկատու, Թեհրան ամսագիր 1979 ~ 89, հրատ. «Արարատ» կազմակերպութեան, մեք. բաղմացւած, էջ՝ 16, մեծթ. 21×28 5 և 22.5×33 ս. մ.:

Ծանօթ. Սկսել է հրատարակել 1979 թ-ի Սեպտեմբերից, դադարել է 1982 թ-ին և 1988 թ-ի Յունիսից շարունակել է նորից, մինչև 1989 թ-ի Ապրիլը:

12. ԱՐԴ

Թեհրան 1972 թ. Մեք. բաղմացւած Ա. թիւը, Ապրիլին, էջ՝ 16, մեծթ. 16.5×24 ս. մ.:

Ծանօթ. Անւանթերթը տպագրւած է և վրան ունի Արտաւազ թաղաւորի դրամի պատկերը:

13. ԱՐԵՒԵԼՔ

Ամսաթերթ, Թեհրան, 1980 թ.

14. ԱՐԾԻԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

Թաւրիգ, 1938 թ. աշակերտական թերթիկ, ձեռագիր, խմբագիր՝ Էմիլ Յակոբեան, էջ՝ 4, մեծ, 22×33 ս. մ. Հրատարակել է միայն երկու թիւ:

15. ԲԱՂԴԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

Տպագրութիւն «Կայծակեան» Աբադան 1933, 3 (դ) + 16 էջ՝ ձեռագրով գրւած և խմորատիպ, սկզբում ունի երկու էջով նկարներ, շարւածք. 9×15 ս. մ.:

16. ԲԻԻՐԱԿՆ

Ամսագիր, Թաւրիզ 1936 ~ 1940, ձեռագիր, Օրդան դաշնակցական աշակերտների, խմբագրական կազմ՝ Նորայր Ստեփանեան, Վիկտոր Աֆթանյիլեան, Սամուէլ Սարուխանեան, Զաւէն Ղազարեան և ուրիշներ, էջ՝ . . . մեծութ. 14 × 20 ս. մ.:

17. ԴԻԻՂԱՅՈՒ ԶԱՅՆ

Շաբաթաթերթ, Նոր Զուղա, ձեռագիր, աշակերտական 1919-1920 խմբագիր՝ Վարդան Անդրէասեան, աշակերտ Ազգային Կենտրոն. զպրոցի էջ՝ 4, մեծ. 13.5 × 21 ս. մ.:

18. ԴԵՊԻ ԵՐԿԻՐ



Պարբերաթերթ, Նոր Զուղա 1981 ~ 1986, Օրդան « Ռուբէն » (Ղ. Յ. Դ.) երիտասարդական Միութեան, խմբագրական կազմ. էջ՝ 8 ~ 20, մեծութ. 24 × 34 ս. մ.:

19. ԴՈՒՄԱՆ

Ամսաթերթ, Թաւրիզ 1935, ձեռագիր, աշակերտական, խմբագրական կազմ գլխաւորութեամբ Նորայր Ստեփանեանի, էջ՝ . . . մեծութ. 15 × 21 ս. մ.:

20. ԴՐԱԶՐԿ

Ամսաթերթ: Կրօնական, դրական, բանասիրական, Թաւրիզ, 1963 ~ 1964, մեքենագիր ~ բազմացւած, Պաշտօնաթերթ Թաւրիզի Հայ Եկեղեցասէր Կանանց, էջ՝ մեծութ. . . .

21. ԶԱՐԹՕՆՔ

Շաբաթաթերթ, Թեհրան 1954 թ. մեքենագիր - բաղմայալած, խմբագրական կազմ, պատկանել է Հ. Յ. Դ. Պատանեկան Միութեան, էջ՝ 16, մեծ թ. 18×23 ս. մ.:

22. ԶԱՐԿ

Շաբաթաթերթ Փերիա, Ղարղուն գիւղ, ձեռագիր, 1929 թ.

23. ԶԵՅԹՈՒՆ

Երկշաբաթաթերթ Թաւրիգ, 1938 թ. ձեռագիր, Մանկական-մարզական, աշակերտական, էջ՝ 2, մեծ թ. 22×36 ս. մ.:

24. ԶԵՅԹՈՒՆ

Երկշաբաթաթերթ, Թաւրիգ, 1938 թ. Աշակերտական, ձեռագիր, Օրդան « Զէյթուն » խմբի, խմբագրական կազմ, գլխաւորութեամբ՝ Գրիշ Տէր Յակոբեանի և Սուրիկ Մելիք Սարգսեանի, էջ՝ մեծ թ.

25. ԺԱՅՈՒ

Շաբաթաթերթ, Քաղաքական, գրական և ընկերական ու պարոցական, Թեհրան 1932 ~ 1933, խմբագիր՝ Շաւասպ Պետրոսեան, էջ՝ 4, մեծ թ. 22×35 ս. մ.:

26. ԺՈՂՈՎՈՒՐԳ

ԺՈՂՈՎՈՒՐԳ

ՀՐԱՏԱՂԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎԱՐԿԱՆ ԺԱՅՈՒ

ԹԻՒ 4

ԱՊՐԻԼ 12

1979

Շաբաթաթերթ, Նոր Զուղա 1979 թ. Մեքենագիր - բաղմայալած, հրատարակութիւն Հայ Ժողովրդական Ճակատի, էջ՝ 4, մեծ թ. 22×28 ս. մ.:

27. ԼԻԼԻՊՈՒՏ

